



ԵՐԿԱՄՍԵԱՅ ՀԱՆԳԷՍ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

ՀՐԱՏԵՐԵԿԵԱԼ

Ի ՍՈՓԻԱՅԷ ՄՍԵՐԵԱՆՑ

ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ

„Ա՛ւ է անագան քան ոչ երբէք“ (Եւսեփ):

ՏԵՏԻ Գ.—(ՄԵՅԻՍ-ՅՈՒՆԻՍ)—1881 ԵՄԻ

ԾԱՆՈՒՅՈՒՄՆ

- »ՓԱՐՈՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ« հանդիսի նիւթն է՝ Պատմական, Բանասիրական, Քաղաքական և Ազգային Գիտելիք:
- »ՓԱՐՈՍՆ« լինելով պատկերազարդ հանդէս՝ խնդրում է պատուելի ազգայնոց առաքել նորան, ազգագրութեան համար, Ազգային հեղինակաց և երևելի անձանց, Հայաստանի հնութեանց և նշանաւոր տեղեաց պատկերներն, նոցա համառօտ նկարագրութիւններով:
- »ՓԱՐՈՍԻ« խմբագրութիւնն ուրախութեամբ կրնդունէ ազգագրութեան համար ազգային մատենագրութեան և ազգային կենաց վերաբերեալ յօդուածներ, ազգային վէպեր, ոտանաւորներ, և այլն:
- »ՓԱՐՈՍՆ« հրատարակի ՚ի Մոսկուա վէց անգամ ՚ի տարին, այն է՝ երկու ամիսն Բէլանգամ:
- »ՓԱՐՈՍԻ« տարեկան գինն հանդերձ առաքմամբ է 5 ռուբլէ:
- »ՓԱՐՈՍԻ« ներկայ ամի տետրերն առանձին չեն վաճառվում:
- »ՓԱՐՈՍԻ« ԽՄԲԱԳՐԱՏԵՆ հասցէն այս է. Москва, Мещанская башия, домъ Милованова. (Մոսկուա. Մէշնչերովա բաշնեայ, տուն Միլովանովի):

Ի. ԳԱՏՅՈՒԵ
IMPRIMERIE A. A. GATZOUK.
à Moscou, Boulevard de Nikitsky, maison Gatzouk.
1881.

👉 Կ. ՊՕԼՈՅ ՍՐԻՆՈՒՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՊԵՏՐՈՒՄՆԻ ԿՈՄԻՏԵՍԻ ՆՈՐ ՆԿԱՐՈՒԱԾ ՎԻՃԱՍԻՎ ԿԱՏԻՆԻՆ
ստանալ ցանկացողներն, վճարում են իւրաքանչիւր օրինակի համար 1 օ.



ԱՐՈՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ Կատկերազարդ հանդէսն 'ի Տէրութենէ ստացեալ նոր թոյլտուութեան համաձայն, պիտի հրատարակուի 'ի տարին վեց անգամ, այն է՝ Եղիաթի Կէնտրոն (Յունուարին, Մարտին, Մայիսին, Յուլիսին, Սեպտեմբերին և Նոյեմբերին): Նորա իւրաքանչիւր տարն պիտի բովանդակէ իւր մէջ 2½—3 քառաձաղ թերթ 10—12 պատկերներով:

Տարեկան գինն, չը նայելով թերթերի և պատկերների աւելման, մնում է նոյն, այն է՝ 5 օրինակ հանդերձ առաքմամբ, կանխիկ վճարելի:

Խոստացան միշտ աշխատակցելու մեզ՝ պ. Զարմայր Մ. Մսերեանց, Տ. Աստղիկ*, Ս. և Օ. Մոսկուայում:—պ. Արմենակ Սիւնի*, Մոծակ*, Տիկիսում:—պ. Կ. Աղամբանեանց և Զեւան* Աղեքսանդրապոլում:—պ. Տ. Փ., պ. Տիգրան-Աշոտ*, պ. Միրզա Մսերեանց, և պ. Լուսարար-Փարոսի*: Կ. Պոլսում:—պ. Գ. Մսերեանց՝ Զմիւռնիայում:—պ. Յ. Չաքրեան՝ Զէյթունում, և այլք՝ որոց անուններն դեռ իրաւունք չունենք հրատարակելու: Ունիմք նաև սեպհական թղթակիցք՝ Լոնդոնում, Փարիզում, Կ. Պոլսում, Կարին, Վան, Հոպահան, Բազու, Երևան և այլ տեղեր, որք միշտ պիտի հաղորդեն մեզ ազգային տեղեկութիւններ և ճոխացնեն մեր հանդէսը ազգային պատկերներով:

Ծանօթ. Աստղով նշանակուած անուններն կեղծանուն են (Փսէպսիս):

ՏԱՐԵՑՈՅՑ ՓԱՐՈՍԻ

1881 թուականին Գրիստոսի և ՌՅԼ-ՌՅԼԱ (1330—1331) ազգիս Հայոց:

ՏԱՐԵԹԻՒՔ:		ՏԱՐԵՄՈՒՏՔ:	
'ի սկզբանէ աշխարհի	7.389	Բուն թոյն Հայոց 4.373	Օգոստ. 11
'ի սկզբնաւորութենէ Հայոց թուականիս	ՌՅԼ	Հայոց թուականին ՌՅԼԱ	» 13
Ըստ Հայկայ շրջանին	4.372	Փոքր թուոյն Աղարիայի ՄԿԶ	Մարտի 21
Գ. Շրջանին Հայկայ	1.452	Գ. Շրջանին Հայկայ 1.453	» 9
Փոքր թուոյն Հայոց ըստ Աղարիայի	ՄԿԵ	Թուականին Գրիստոսի 1882	Յունուարի 1

ՀԱՄԱՌՈՍ ԱԶԳԱՅԻՆ ՏՕՆԱՅՈՅՑ 1881 ԱՄԻ:

Օր ԾՆՆԻՆԱՆ 'ի Յուն. 6	Համբարձումն 'ի Մայիսի 21	Բարեկ. վարագ. խաչ . 'ի Սեպտեմ. 20
Միջոց ուտիք, աւուրք 27	Հողագալուստ » 31	Միջոց ուտիք, շաբաթք Եօթն.
Բարեկենդան Առաջ 'ի Փետրվ. 1	Բարեկ. Ս. Լուսարարի . 'ի Յունիսի 21	Գիւս խաչ 'ի Հոկտ. 25
Օր ՏԵՆՈՒՆԸՆԻԱՌԱԶԻ » 14	ՎԱՐԻՆԱՎԱՌ 'ի Յուլիսի 19	Բարեկ. Յիսնակաց 'ի Նոյեմբ. 15
Բուն բարեկենդան » 22	Միջոց շաբաթք պահովք 2օրք.	Բարեկ. Ս. Յակ. պհ 'ի Գեկտ. 6
Օր Աւետման 'ի Ապրիլի 7	ԱՍՏՈՒԾՄԱԾԻՆ յՕգոստ. 16	Ս. Յակոբ » 12
ՉԱՏԻԿ » 12	ՄԻՆ. շաբ. պահովք 2օրք.	Միջոց ուտիք, աւուրք 17
Երեւման խաչ 'ի Մայիսի 10	ԽԱՉՎԵՐԱՅ 'ի Սեպտեմ. 13	Օր բարեկ. Ծննդ 'ի Գեկտ. 29


ԱՌՈՒՐՔ ՄԱՀՈՒԱՆ ԵՐԵՒԵԼԻ ՀԱՅԿԱԶԱՆՑ:

* Փետրվար. 6. մահ Յովհաննու Յովակիմեան Լազարեանց (1857):—13. մահ Ներսէս Ե. Կաթողիկոսի ամենայն Հայոց (1857):—Մարտ. 19. մահ Յովսէփայ Գ. Կաթողիկոսի (1801):—Ապրիլ. 5. մահ Միքայէլի Միանսարեանց (1880):—8. մահ Գաբրիէլ արք եպիսկոպոսի Այվազեանց (1880):—16. մահ Ճանիկայ Արամեան (1879):—26. մահ Ստեփաննոսի Նազարեանց (1879):—Մայիս. 24. մահ Յարութիւն վարդ. Ալամդարեան (1834):—28. մահ Ղուկասու Գ. Պալազարեան (1878):—Օգոստոս. 2. մահ Մսերայ Մ. Մսերեանց (1873):—14. մահ Յովհաննու Գաւթեան Լազարեանց (1879):—19. մահ Միքայէլ արքեպիսկոպոսի Սալանթեան (1851):—22. մահ Մատթէոս Կաթողիկոսի (1865):—29. մահ Կարապետ վարդ. Շահնազարեան (1865):—Հոկտեմբեր. 14. մահ Ղազարայ Յովակիմեան Լազարեանց (1871):—Գեկտեմբեր. 9. մահ Խաչատրոյ Յովակիմեան Լազարեանց (1871):

ՀԱՅԵՐԻՆ ԼՐԱԳԻՐՔ ԵՒ ԱՄՍԱԳԻՐՔ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ 1881 ԱՄԻ:

1. Արարո՞ ամազիր կրօնական, պատմական, բանասիրական, բարոյական և ազգային, հրատարակի իւրաքանչիւր ամսոյ վերջում: Տարեկան գինն է՝ 4 օ.
2. Մշակ՝ հանապազօրեայ լրագիր քաղաքական և բանասիրական: Տարեկան գինն է՝ 10 օ.
3. Մեղու՝ Հայաստանի՝ հանապազօրեայ լրագիր քաղաքական և բանասիրական: Տարեկան գինն է՝ 10 օ.
4. Փոքր՝ ամազիր բանասիրական: Տարեկան գինն է՝ 10 օ.
5. Պսակ՝ լրագիր գրականական, պատմական և մանկավարժական: Տարեկան գինն է՝ 4 օ.

ՓԱՐՈՍ ԼԱՅԱՍՏԱՆԻ



ԵՐՐՈՐԴ

ՏԱՐԻ

ԵՐԿԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԻՍ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

ՏԵՏԻ Գ

ՎՊՐԻՒՄՍՈՅԻՍ

1881 ԵՄԻ

ՍԱՐԳԻՍ ՊԷՅ ՊԱԼԵԱՆ



ՍԱՐԳԻՍ
Պէյ Պա-
լեան եր-
կու դա-
րէ 'ի վեր

Սուլթաններու ճարտարապետաց ժառանգն է: Չը կայ մի հոյակապ արքունական շէնք 'ի Ա. Պոլիս, որ այս րնտանիքի տաղանդին ծնունդն չը լինի և ամենուն հիացումն չը պատճառէ: Բայց իւր նախնիքներէն առաւել Սարգիս Պէյ, որ քաջ հանդիսացած է Փարիզու արհեստից կեդրոնական դպրոցին մէջ, կարողացած է համաձայնեցնել ինչ որ ուսուցած է իրեն քաղաքականացեալ ազգաց



ՍԱՐԳԻՍ ՊԷՅ ՊԱԼԵԱՆ
САРКИСЪ БЕЙ БАЛЪЯНЪ. | SARKISE BEY BALIANN.
(Պատկերս նկարեցաւ և փորագրեցաւ յատուկ մեր հանդիսի համար)

զիտութիւնն և ճարտարապետական արհեստն, ընդ արեւելեան ճաշակին, և այսպէս իւր կառուցած շէնքերուն իւրեան յատուկ ոճն դրոշմած է, մի ոճ

քական պաշտօնաաարութեան նախագոյն աստիճանին և նորա կուրծքին վերայ կը փայլին ամեն Տէրութեանց բարձր պատուանշաններն, որք շնոր-

նորաստեղծ՝ որ նախնեաց շէնքերու մեծութիւնն, Պոթական հոյակապութիւնն և վերածննդեան դարուն շինուածոց վայելութիւնը կը բովանդակէ: Ա կայ են մեր այս խօսքին, 'ի մէջ բազմաց, Չրբաղանի, Պէյլէրպէյի և Նըլաղզի պալատներն և այն հսկայաշէն զինատունն, որ կը տիրէ բարձրէն Ա ռոպորի վերայ, որոց արագութեամբ գեանէն բարձրանալն անանկով ամեն ոք կը կարծէր՝ թէ զիւթական մի գաւաղան կը գործէր անդ:

Եյս ճարտարարուեստ ազգայինն, որ երկը Սուլթանի վստահութիւնն վայելած է մինչև ցարդ, հասած է քաղաքային պաշտօնաաարութեան նախագոյն աստիճանին և նորա կուրծքին վերայ կը փայլին ամեն Տէրութեանց բարձր պատուանշաններն, որք շնոր-

հուած են ՚ի վարձատրութիւն իւր արժանեաց: Բայց պաշտօնական այս փայլումներէն զուրս, Սարգիս Պէյ, ջերմ սիրահար քիմիական և մեքենական արուեստից, սոցա մէջ աշխատած է նաև ՚ի զործ դնել իւր տաղանդն և այնպէս յաջողած է, զընտրապէս երկու ճարտարահար գիւտերով, բերել իւր քարն վասն կառուցման գիտութեան ամենահսկայ շէնքին: Եյս գիւտերէն մին է Հողմական շոգեշարժ ձեռնան (Machine à vapeur rotative), բոլորովին նորահար մի ձևով, որ Լոնդոնի արուեստահանդիսին մէջ մրցանակ ստացած է: Երկրորդն է լրումն առաջնոյն, մի կաթսայ Տրցակաւոր անպայթելի (Chaudière fasciculaire inexplorable), որ վերջի ժամանակներս Եւրոպիոյ ամեն կողմն արտօնագիր ընդունած է: Սոցա նկարագրութիւնքն և ուրիշ մեքենայից վերայ ունեցած առաւելութիւնքն մասնագիտաց վերաբերեալ լինելուն, մեր այնքան կարեւր դիտել՝ որ Եւրոպական գիտնականաց տուած

կարեորութիւնն բաւ է նոցա պիտանաւորութեանն երաշխաւորելոյ համար:

Եթէ հարկ համարեցաք պնդել Սարգիս Պէյի այս յատկութեանց վերայ, որք այլ ևս պէտք չ'ունին զովստի, այս հատկութիւնն յառաջ բերելոյ համար էր, որ Թուրքիաբնակ ազգային մեծատանց ժառանգորդներուն այժմեան կացութեանն հակառակ, Պալեան պահած է անարատ իւր ընտանեկան փառաւոր անունն, քանզի իւր գերդաստանն երբէք չ'է խնդրած մի միայն անցաւոր մի փայլումն և զբաւական մի ճոխութիւն, որք ոչինչ են լրջամիտ աշխարհին առջև, եթէ չ'են հաստատապէս յինեալ ուսմանց և գիտութեանց վերայ:

Չէ հարկ Պալեանց ազգային զգացմանց մասին խօսիլ առաւել, քանզի ամեն ոք գիտէ՝ թէ ազգին բարութեանն աշխատիլն այն առհմին մի անուրանալի աւանդութիւնն է:

Կ. Պոլս:



ՀԱՅՈՑ ԴԻՒՅԱԶՆԸ 1877 ԹՈՒԱԿԱՆԻՆ

ՉԹԵՌ էր տիրել Հայոց աշխարհում,
Ուր կան Արաահան, Կարս և Էրզրում.
Մասսայ գաղաթէն մինչև Սողանլուխ,
Երկու բանակաց զնդեր են տեսնում:

Մէկ գունդը Ռուսաց, միւսը Օսմանցոց,
Օէնքերէն թափին կայծակ, հուր ու բոց.
Եղաղակ, գոռին, գոչին և թնդին,
Կլբուխն նաև անկելոց ողբ, կոծ:

Ռուս կարիճներ Օսմանցու առաջ,
Կանգնած անկողով կ'կուտին քաջ քաջ.
Հարուած հարուածի, մահուան գնդակներ,
Կ'փռեն հազար անշունչ դիակներ:

Մինչդեռ այն օրը յաղթութեան բաժակ,
Կ'յուսայ խմել Մուխտարի բանակ.
Եզգային հանդէս կատարել անդէն,
Ռուսաց ձեռքէն խլած պաշարէն:

Եհն՝ յանկարծ Ռուսը շարժում մի արին,
Եւ նոցա միջէն հսկայ մի մարմին.
Երազ քայլերով վաշտերը ձեղքած,
Թուրը աջ ձեռին ելաւ ընդ առաջ:

«Հայ երթանք կուռի, դնք իմ քաջ ընկերք,
«Բանի ձեզ հեռ եմ» երբէք մի վախէք.
«Եյսօր կորոշեմ մեր բազը ուղղի,
«Կամ կարսը կառնեմ, կամ կընկնեմ գերի»:

Եսաց ու նստեց սպիտակ ձիուն,
Որ փրփուր բերնով կայր անդէն կանդուն.
Սլացաւ մտաւ թշնամու բանակ,
Իրեն հեռեց շորս հարիւր կազակ:

Շատ քաջ տաճիկներ իրենց մահ տեսին,
Շատերը ահէն երես շուռ տոխին.
Իսկ դեռ քաջ Գիւցաղնը խոժոռած դէմքով,
Ել ու ձախ հարուածք կ'ապ անխռով:

Մեն մի հարուած երբ նա կը կռւեր,
Երկու օսմանդի իւր տակն ընկձեր.
Իբրև նոր Արէս պատերազմի մէջ
Շատերի կեանքին կ'ուտար խնդն վերջ:

Սարսափեց Մուխտար Գիւցաղնի դէմքէն,
Որոյ աչերէն կրակ թափթփին.
Չափեց ու կռեց սաբէն մինչ գլուխ,
Շուռ ճանաչեց նա այդ պարագլուխ:

Թուրացաւ սաները, վհատիլ սկսաւ,
Չգեց զէնքերը իւր ձիուն նստաւ.
Սաստիկ հրաման տարով բանակին,
Հազիւ աղաառած էրզրում փախաւ:

Միևնոյն օրը Գիւցաղնի ձեռքով,
Եռաւ կարսայ բերդ, առաւ իւր զօրքով.
Ռուսաց դրօշ կարսում փայլեցաւ,
Սուլթանի ասաղը իսպառ մարեցաւ:

Բայց ո՞վ էր այդ անձ, այդ Հսկայն ո՞վ էր,
Որի երեսէն Մուխտար կ'փախչէր.
Ո՞վ էր այդ Արէս, որոյ աչերէն
Ենդադար կրակ, արիւն, բոց թափին.
Ո՞վ էր այդ Գիւցաղն կարսայ առնողը,
Եւ Ռուս դրօշակ նորա մէջ անկող:
Հայ Լաղրոն էր այդ, քաջն քաջարանց,
Յաղթութեան պսակ շատ անգամ առած.
Ինդդէմ Շամիլի, ընդդէմ իսկ տաճիկաց,
Ենվախ, աներկիւղ շատ անգամ ելած:

Հայ Լաղրոն էր այդ, դափնիւք պսակուած,
Մեն թշնամեաց ահ, սարսափ ձգած,
Որոյ մի ակնարկ ՚ի սիրտ թշնամոյն
Բաւ էր ազդելու իբրև մահաթոյն...

Են, ինչո՞ւ թուեմ քո անթիւ գործեր,
Որոնք փառք, պատիւ քեզի են բերել,
Ենմահ կ'մնաս մինչև յաւիտեան,
Պարծանք Հայութեան՝ Յովհաննէս Լազարեան:

Կարճատեղ 1880

Կ. Կ. Մէլի + Հանապարեանց:

ՄԻՐԶԱՅԵԱՆ ՄԱՆՈՒԿ ՊԷՅ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՎԱՐՈՒՅ ՆՈՐԱ *)

ԳՆ. Թ.

Ի ԳԱ Մանուկայ ՚ի Կ. Պոլիս՝ եզիտ անդ առ միում ՚ի գործակարացն յանուն իւր նամակս ՚ի Թիրսենիքլեայ, որ գրէր նմա՝ զի ՚ի դառնալ իւր ողջամբ յուխտագնացութենէն՝ փութացի վաղ առ ինքն հասանել ՚ի Ռուսջուգ. զի ՚ի իրաց իրաց,

նիքլե աւետել զգալուսա Մանուկայ: Այնչափ իմն զիզաւ խնդութեամբ սիրա Թիրսենիքլեայ, մինչև տալ նմա ՚ի պարգև աւետամատոյց առնն զմուշտակ մի, և զմի ձի և դահեկանս եօթն հազար և հինգ հարիւր:



ՏՆ՝ ԷՂ Զ. Մլացաւ մտաւ Թշնամու բանակ, Իրեն հետեւեց չորս հարիւր կազակ:

ГЕНЕРАЛЪ ЛАЗАРЕВЪ ВЪ БИТВѢ ПОДЪ КАРСОМЪ. | GENERALE LAZAREFF à COMBAT de KARS.

(Պատկերանկարեցաւ և փորագրեցաւ յատուկ մեր հանդիսի համար)

ասէ, կարգք ՚ի քաղաքիս յիս քոյոյ մեկնելոյ վեր ՚ի վայր յեղծումն բերեալ՝ վերստին քոււմդ կարօտին ուղղութեան: Բայց Մանուկայ հարկ եղև զիգերել անդէն աւելի քան զամիս մի պատճառաւ վարձելոյ կարուածս ինչ դարևորս (իլթիզամ):

ԵՆ ապա անտի գնալ ՚ի Գոնովա՝ ուր էր յայնժամ Թիրսենիքլե: Այլ չև անդր հասեալ՝ փութացոյց Պապիկ նախնթացիկ զոմն առ Թիրսե-

Իբրև եկն Մանուկ ՚ի Գոնովա՝ եզիտ անդ շատ զքք ՚ի կարանս, յորոց մի էր և Զօլագ Միւլէյման, այր քաջազօր ՚ի քաջալաւ տոհմէ և զամենեսին զնոսա զերծոյց ՚ի պատուհասից մահուն, որ ՚ի վերայ կայր նոցա ՚ի ցասմանէն Թիրսենիքլեայ՝ Թէև չէին ինչ ծանուենս յանցուցեալ: Իսկ առ Զօլագ առաւելոմն երախտագործեաց. զի ոչ միայն զյանցանսն թողացոյց նմա, այլև յանդիման ածեալ

*) Հարունակութիւն, տես հանդիսի նախնթաց տետրն:

զնա Թիրսենիքլայ՝ տալ ետ նմա անգին զզլեսահարկսն Չինկեանէից՝ յոր մարթ էր նմա յերկր ամաց միջոցի շահիլ զահեկանս աւելի քան զԹոսնասունն հազար: Աւ յեա աւուրց ինչ եկն եմուս ընդ Թիրսենիքլայ ՚ի միասին ՚ի Ռուսջուզ:

Ոմանք յաւագայնոց քաղաքին՝ արք նախանձոտք և չարակունք առաւելագոյն տեսալ արդէն զսէր Թիրսենիքլայ առ Մանուկ քան զառաջինն, յաւուր միում՝ այն ինչ խմբեալ կային առ Թիրսենիքլայ՝ հարցին ցնա զպատճառն այնորիկ այլ մինչ չև էին լուեալ զպատասխանի, եմուս անդր և Մանուկ՝ խօսել ընդ Թիրսենիքլայ գիւրեւորագոյն ինչ իրաց՝ զոր եղեալն էր ՚ի կարգի: Ասէ ցնաս յայնժամ Թիրսենիքլի յՏեարք, զի յտեղ կամէիք՝ էր աղագաւ զայս զայս սիրեմ ես յոյժ: Երգ՝ դուք ինքնին տուք զերաւն. ՚ի մեկնելոյ յորա յինէն մինչև յայժմ ամենայն գործք իմ ընդ ձախողակս ընթանային. և զոր՝ քաջախոհքն յի մերոց կամ մի ողջոյն տարժանեալ զատիկեցին յկարգաւորել, սա զնոյն ՚ի մէջ երկուց ժամուց յյանկ հանեալ՝ եկն ահա տալ ինձ զինաց: Օխարդ ուրեմն մեծագոյն ինամոց և սիրոյ արժանի չգրես. յցի այր այսպիսի գործոն և հաւատարիմ՝:

Թիրսենիքլի յամէն 1802 հասեալ ՚ի բարձրակատար աստիճան փառաց և բաղլի՝ քաղաքավարեաց զկեանս իւր ըստ հաճոյս անձին յանդորր բարեկենդանութեան մինչև ցմահ: Ա զրակից գաւառակալաց իշխեաց որ ոչ գէմ կալ բուռն զորութեան նորա: Տէրութիւնն ևս անձեռնհաս գոլով ընկձիլ զնա, շատանայր միայն տրովք հարկացն՝ և կեղծուպատիր հնազանդութեամբն, զոր ՚ի վերին երեսս և եթ ցուցանէր նա. ուստի և հրաման ինչ ոչ առաքէր նմա մինչ չև ծանուցեալ զհաճոյս նորա առ կատարումն այնորիկ, թէպէտ և անկ էր Թիրսենիքլայ՝ օրինակ առեալ յայլոց պաշտօնակալաց Պետութեան՝ երբէք իւրք մարդահաձիլ գեթ Վահէրիցանց Վրանն. այլ նա ընդ հակառակն ամենեկին լոյսս՝ թշնամանս՝ և երգիծանս զառինս հասուցանէր ՚ի լուր ակնջաց նոցա յուռքէ ինչ ոչ ակնածեալ *). և արքայօրէն իմն զօգցես կալեալ զիշխանութիւն լի և ճօխ ամենայն բարեբաստութեամբ ինքնահրաման յիւրումն տիրապետէր

*) Բազում անգամ ազգ առնէ նախարարաց Վրանն, թէ խորհիմ անձամբ դիմել ՚ի Ա Պօլսի ՚ի նորոգել անդէն զամենայն կարգս ուզու թեանց՝ զխաթարեալն ձերովք չարաչար ընթացիւք: Գէպ եղև երբեմն առաքել առ նա փոխարքային զմի օմն ընծայութեան թղթով՝ զի կարգեսցէ զնա ՚ի սպասու իրիք շահաբեր պաշտաման: Իմացեալ Թիրսենիքլայ՝ եթէ կամք փոխարքային է կրճել ինչ կաշասս պատրուակաւն այնուիկ, ասէ ցնամակաբերն յերթ յայտնեան աղուխուն այնուիկ բազմախարդախ քում տեսուն, թէ տեսեր զԹիրսենիքլի, զայր մի՝ ոյր հասակ ձինգ, մորք՝ շէկ, հայեցուած՝ ժանս, և բարուր իցէ նմա՝ զգոյշ յառնէ կալ յայսպիսոյ:

Վիճակի: Օրէն էր՝ զե ամի ամի այլ ամենայն քաղաքապետք որ ընդ նորա հրամանաւն էին՝ զային համբուրել զձեռս նորա յաւուր Պայրամի, և ընդունէին զսովորական պարզեան՝ մի մի ձի և մի մի մուշտակ: Անուանաւորք ՚ի զինակցաց նորա՝ է որ դարևոր կալուածոց տիրութեամբ, և է որ պաշտօնընկալութեամբ իւրք լի և լի գոհ էին զնմանէ. և ոյք միանգամ սպաս ինչ տարեալ էին նմա՝ կարգեցան գեղջաւազք (Սու պաշե) յայլեայլ ՚ի շէնս: Աւ զօրականին առատ էին թոշակք և զգեստք վայելչազարգ: Իսկ եկամուտք վիճակին առաւելան յոյժ յոյժ իմաստուն կարգաւորութեամբքն Մանուկայ՝ առանց իրիք զգահարանաց. սակք բաժից կամ հարկաց այնպէս իմն անաշտաւարաշխ որոշեալ էին ըստ անցնիւր գլխոյ, զի ոչ որ աւելի քան զիւր կարն տայր և ոչ դարձեալ որ՝ պակաս: Աւ քանզի բազումք յայնր ժամանակի օրերոյն կիրթք էին յամենայն ոճիրս անիրաւութեանց, պէտք եղին Թիրսենիքլայ գաւազանաւ խտուր վարել զիշխանութիւն իւր յահ և ՚ի սանձահարումն ստամբակաց. ապա թէ ոչ՝ հնարին չէր յապահովել կալ կենաց և ստացուածոց հասարակաց: Ամենայն գաւառորք և փոխանորդք (Վայվատայք) յակամայ կամն ստիպէին յամենայնի յերկուրել զանձինս ըստ արժանացն Թիրսենիքլայ, և իշխէին իսկ ոչ ամենեկին կաշտաբեկութեամբ կամ աշտանօք թիւրել զուրուք զբառաստան՝ երկուցեալ ՚ի պատուհասիցն անինայ: Գաւառն ամենայն և առաւել կողմանք Ռուսջուզայ՝ որ մասամբ մեծաւ յառաջագոյն իբր ապալիր ամայլ կային՝ լցան բնակչօք և շինութեամբ: Անխոնջ մշակք յազգէ Բուլղարաց, նոյն և Հազարացիք հուպ առ միմեանս վարէին և հնձէին՝ անքութացեալք ՚ի պաշտօնակալացն բռնութենէ կամ ՚ի խուկոյ զօրականին: Վաղաքն՝ ոյր հոծ և խիտ էին փողոցք հանթիցն բազմութեամբ երևէր իբրև շանարան իմն մեծի վաճառականութեան: Ընդ մի ՚ի զրանց նորա մասնէին տողաբար ջոկք ջոկք կարաւանաց եկեալք ՚ի Ա Պօլսոյ, և ընդ միւսն ելանէին՝ երթալ սփռել զարևելիայ վաճառան ընդ ամենայն քաղաքս Ալլազայ: Վաղք բռնաւորք ՚ի Ա կենայէ՝ անցեալ ընդ Վանուր՝ ընուին զնա ճօխութեամբ արևմտեան վաճառաց: Առգնողք նորա երթեկեկալ մինչև ՚ի տօնավաճառն Ափցիկայ՝ առեալ աճէին զազգս սզգս մեծագին աղխամաղխաց ՚ի պէտս զարդու և պճնութեան, զորս և տարածանէին ՚ի վաճառչուրջ ընդ ամենայն տեղես: Հրէայք՝ ազգ վաճառասէր՝ ՚ի տեղեաց տեղեաց հեղան զեղան անդր ՚ի սուղ ժամանակի՝ ուր յառաջագոյն հազիւ թէ տունք քանի մի գտանէին ՚ի նոցանէ:



ՓԱՐՏԻ ՄԷԿԻՆ ԿԱՏԱՐՈՒԱԾ ԵՂԵՌՆԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ՏԵՂԷՆ:
 (Мѣсто покушенія 1-го Марта).

Եւ քանզի այսօրիկ ամենայն արդիւնք էին մեծաջան վաստակոցն Մանուկայ, զուարճանայր նա՛ հայեցեալ ընդ այնչափ բարգաւաճանս քաղաքին, առ որ անուամբ միայն և բազկաւ զօրավիզն լեալ էր Թիրսնիքըն: Թէպէտև զօր ամենայն կայր նա՛ ՚ի բազմադէմ հոգս անտեսութեան ընդարձակ վիճակին՝ որ նմա միայնում յանձն էր, համայն և այնպէս չկորուսանէր զժամանակ պատահութեան աուրեւանից՝ յորովիլ նոքիմբք զսասացուածս իւր: Ջանապիր էր միշտ ՚ի շահ օգտի, բայց առանց վնասելոյ ումեք կամ անիրաւելոյ. և զոր առնէրն՝ ծանուցանէր զամենայն Թիրսնիքընայ: Եւ Թիրսնիքըն՝ քանզի կամեցող էր հարստութեանն Մանուկայ՝ նմա միայն տայր զմենավաճառութիւն մեառքսացն Վանուկայ՝ որոց կշիռ ամի ամի հաշուէր իբրև քսան և հինգ հազար նուկի. և շահք Մանուկայ յայնցանէ՛ առ մեն մի նուկի դահեկանս երես եզեալ՝ զուամբէր յամենայն ամի եօթանասուն և հինգ հազար դահեկան: Վնէր Մանուկ և զա-

մենայն զգեղմն և զմոմ՝ որ կանէին ՚ի վիճակէն Թիրսնիքընայ, զորս և առաքեալ յօտար սահմանս՝ շահէր ամ յամէ ՚ի վաճառաց նոցին դահեկանս իբրև երկերիւր և յիսուն հազար: Բաց յայսցանէ՛ բացաւ Մանուկայ և այլ զուռն շահուց. զի Իփսիլանթի Պէյ Վալաքիոյ յիս տալոյ նմա ՚ի շնորհս Թիրսնիքընայ զպաշտօն Մատուռակութեան (Փահարնիք), (զի յառաջ Սերտար էր), յաւել նմա վաճառել զիւրազնի զեռամեայ կալուածս Աղէհան. քաց գաւառին իւրոյ, որ ամի ամի (յամէն 1803 մինչ ց1806) տայր ՚ի շահ դահեկանս աւելի քան զերեք հարիւր հազար:

Իբրև ըստ բաւականին յօրացաւ Մանուկ փարթամութեամբ ընչից և զրամոց, բան ՚ի գործ արարեալ սկսաւ զնել (որպէս խորհէրն կանխաւ) զանշարժելի կալուածս շինից և զանշէն գեանոց ՚ի Վալաքիա. և նմա միայնում ՚ի մերոյին ազգէ յաջողեցաւ ցայժմ լինել տէր մշտնջենից կալուածոց յերկրին յայնմիկ:

(Շարունակեցի)

Մ Ի Ն Ե Օ Ն

(Գ Է Օ Թ Է)

Ղիտեն արդեօք այն երկիրը, ուր լինեններ ևն ծաղկում,
 Ուր ոսկեդոյն և քաղցրահամ նարինջներ ևն բուսանում,
 Ուր փշում է կապոյտ երկնից առողջարար զով հովիկ,
 Ուր ածում է բարձր դափնի և մրտենի գեղեցիկ:
 Ղիտեն արդեօք՝ այնտեղ, այնտեղ կ'ցանկայի
 Թառչել գնալ այժմ քո հետ, ո՞վ սիրելի:
 Ղիտեն արդեօք դու այն առնը շքեղազարդ, փառահեղ,
 Ուր փայլում է պերճ դահլիճը իւր զարդերով հրաշագեղ,
 Ուր արձաններն կարեկցաբար ինձ ասում են զարմացած,
 «Ի՞նչ ես տիրել, թշուառ աղջիկ, ի՞նչ է քո հետ պատահած»:

Ղիտեն արդեօք՝ այնտեղ, այնտեղ կ'ցանկայի
 Թառչել գնալ այժմ քո հետ, ո՞վ անձկայի:
 Ղիտեն արդեօք դու այն լեառը... նա ամպերով է պատած.
 Այնտեղ ձամբայ որոնում է իւրեան ջարին վաստակած,
 Այնտեղ մթին սյուրեումը միշտ սողում են սև օձեր,
 Այնտեղ բլուրք ջարդում են, և ցայտում են ալերներ:
 Ղիտեն արդեօք՝ այնտեղ, այնտեղ, ցանկամ երթալ,
 Թառչ, ո՞վ հայրիկ պատուական, թո՞ղ, թռչել գնալ:

1881. Կ. Սարգսաբեանց:

ԵՐԵՔԵԱՆ ԸՆԹԱՅՔ ԺԱՄԱՆԱԿԻ

(Թ Ա Ր Գ Մ Ա Ն Ո Ւ Թ Ի Ի Ն)

Ղանդաղ ժամանէ ապագայն,
 Իբրև զաղեղ թռչի ներկայն,
 Անշարժ մնայ անցեալն միայն:
 Ծոյլ զնոցիցն ապագային
 Տալ երազել՝ անհնարին
 Է բնութեան անհամբերին:
 Չարագընթաց քայլ ներկային՝
 Ոչ երկիւղել, ոչ կասկածօք,
 Կարես սանձել դու բնախն:
 Յորժամ անցեալն կայանայ,
 Միշտ և յաւէտ անշարժ մնայ.
 Ոչ զղջումն, ոչ ապաշառ.
 Կարեն նմա օգնել բնառ:

Ո՛վ հէք այր մահկանացու՝
 Թե՛ զհետ երթալ կամիս դու
 Բարեաց բաղդի իմաստնոյ,
 Թո՞յլ տուր ապա, զի գործք քոյ
 Յար հայեցին այսպուհակ
 Ի վեր առեալ ժամանակ.
 Խորհրդակցիր ընդ ապագայ,
 Բայց ոչ յուսալ միշտ ՚ի նա՛,
 Թե՛ զգործոցդ կատարում
 Բնկանուցուս ՚ի վերջնում:
 Մի՛ լինիջիր դու ընկեր
 Եւ ներկային անվեհեր.
 Եւ մի երբէք թշնամի
 Ղու անցելոյն անշարժի:

1881. Մ. Ճեանեանց:

Շ Ի Ր Ա Կ Ի Մ Ի Ք Ա Ն Ի Հ Ն Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր Ը

»Չ՝ չհ.ք շեջեալ, և բուրումն անու-
 »Շահոտ խնկոյն սպասեալ, և սեղան
 »սուրբ խորհրդոյն՝ որ երբեմն ժամա-
 »նակաւ իբրև զնոր հարսն առաջաստի
 »չգնաղագեղ զարգու զարդարեալ էր՝
 »պսակ փառաց ունելով ՚ի դէմն իւր,
 »այժմ է տեսանել ՚ի տեսութիւն ողոր-
 »մելի, և բազում արտասուաց արժանի-
 »մերկացեալ ՚ի զարգուց, լցեալ փշով,
 »լեալ հանգրուանք ազաւուց»:

Լ. Կոթիկերոսյի (ԿԼ. ԺԱ.):

ԽՆՆՎՈՒՄ ՄԵՆԱՍՏԱՆՆԵՐԸ:

ԽՆՆՎՈՒՄ մենաստանները գտանվում են
 Շիրակի գաւառումը, Շիրակաւանից գրեթէ 10
 ժամու հեռաւորութեամբ, նորա արևմտեան-հա-
 րաւային կողմում, որոց սովորաբար անուանում
 են Բէշ-Վիլիսայ, որ նշանակում է հինգ-եկեղեցիք:

Վանքերը կառուցուած են ժայռախիտ ձորերի
 բարձրաբերձ գագաթների վերայ. սոքա սերմուած են
 զոյգ հանգիստակաւ լեռներով (Ալաճայ և Աղղու-
 ճայ): Չորակից, մեզմ պղպջակներով, սողում է
 փոքրիկ վտակը, իւր կապուտ և կարմրախայտ
 ձկներով, որոնք՝ իւրեանց համեղութեամբ, գրեթէ,
 գերազանցում են այս կողմերի բոլոր ձկները:

Այս ձորակը հովասուն օդ և միանգամայն
 բարեխառն կլիմայ ունի. գարնան և ամառուայ
 եղանակներին այնքան զեղեցիկ է, կանաչալից և
 ծաղկախիտ՝ որ վստահութեամբ կարելի է ասել,
 թէ բնութիւնը բոլոր իւր ձիւքերը առատութեամբ
 շնորհելու զբացած չէ. հողը՝ բերրի և արգաւանդ
 է, ջուրը՝ սառն, առատ և մաքուր. երկիրը՝ երկնե-
 րանց ծաղիկներով և բազմատեսակ-փայրների բանձա-
 րեղէններով, ուռենիներով ու զարերի հոսանքին
 զոհուած այգիների մնացուածներով՝ պողատու-
 ծառերով լեցուն. հանքային սաք և սաւը, ծծմբա-
 յին և երկաթի փրկաւէա ջրերով. կարմիր, թուխ
 և գորշ քարերի հանքերով զարգարուն: Այս
 ձորակը ընկնում է նաև Աղղուանի և Աղղբի
 նշանաւոր աղահանքերից ոչ երկար հեռաւորու-
 թեամբ:

Արեք մենաստանները՝ որոնք գրեթէ կից են մի-
 մեանց և կառուցուած սուրբ Սարգիսի, Ասորոս-
 Ժառնայ և Արարալեփի անուաններով, շարուած են
 ձորակի մէջ, մի առանձին ժայռախիտ բլրակի գա-
 գաթի վերայ, և ուխտաւորաց և միաբանութեան
 սենեակների հետ առանձին պարսպով շրջապա-
 սուած են: Գոցա հանդէպ գտանուում են նաև

առանձին թերակղզիացած քարածայուրի վերայ
 հաստատուած սուրբ Սարգիսի և Նախապէսյի և
 Գրեթէ 1-րդ-որչի վանքերը:

Ս. ՍԱՐԳԻՍ:

Սուրբ Սարգիս եկեղեցին շինուած է մութ-դեղ-
 նագոյն քարով, որ սակաւին մնում է նոր և
 գրեթէ բոլորովն անազարդ դրութեամբ, բոլորչի
 և կամարակապ շինութեամբ, զմայլեցուցիչ քան-
 զակներով, մանուածքներով և նկարներով զարդա-
 րուն, որոնք ժամանակակից ճարտարապետի գերբ-
 նական շնորհքի կենդանի վկաներն են:

Սա հիմնարկուած է ՚ի ՆՎԻ թուականին
 Վեսան Սարգիս Հայոց զօրավարից, որ ազգի
 մէջ խոփութեան, կուսակցութեան հետեւապէս և
 թշուառութեան որամբ սերմանելով՝ հայրենիքի
 կործանման և մասնութեան հետ իւր հոգույ
 փրկութիւնը Աստուծոյ Տաճարի շինութեան մէջ
 պառելու մուացած չէր... Սա հեռեկայ մասամբ
 և ժամանակի ոգուն, թիրեւս շատ իշխանաց ձե-
 ուագործերը գերազանցելու դիտաւորութեամբ: Աս
 հասարակ Խնձկոնից մենաստանները աւերիչ ժամա-
 նակի և անզութ մարդկանց հարուածներին երկար
 չ'կարողանալով դիմադրել աւերուած են եղել, և
 ՈՒ թուականին մի Պաւղոս անունով Վարդա-
 պետ վրայ հասնելով՝ Ս. Սարգիս Տաճարը նորու-
 գել տուել է. միւս վանքերի նորոգումներին ոչ
 սակաւ նպաստել են մեր յայտնի Օ.աքարիայ և
 Իւանէ Սպասալարները:

Վանքը արտաքին կողմից բաժանվում է քսան
 կամարակապ մասերի, որոց քանդակագործ կամար-
 ները յենած են զարդարուն խոյակների վերայ. իսկ
 զոցա՝ ներքեկից՝ ուղիղ գծով ձգուած են զոյգ,
 միմեանց կից, սիւնակները: Հիմքից կէս սաժեն
 բարձրանալով՝ սկսվում է նոյն չափ բարձրու-
 թեամբ բազմաձալ գառնիզը, որ ներկայացնում է
 կիսաբլուրակ խորշերով և գաւազանաձև շերտերով
 մի զարդարուն գօտի:

Արտաքին կողմից շրջապատը 17 1/2 սաժեն է,
 որ 10 պատուհաններով մի դուռ ունի հարաւից:
 Փոքրիկ և նեղ պատուհանները գեղեցիկ քանդա-
 կագործութեամբ և մանր, գաւազանաձև սիւնա-
 կներով շրջապատուած են: Առանձին մասերի բա-
 ժանող կամարների բարձրից նկատելի է, որ եկե-
 ղեցին 20 հարթ կամ տափարակ մասերի է բաժա-

նուած, որոց վերայ ձգուած է երկրորդ քանդակագործ գառնիզը, իսկ սորա վերայից ձեղունի նեղ շերտերը, որոնք տեղ տեղ կործանուած են և կանաչ մամուռով ծածկուած:

Քսան անկիւնանի ձեղունի վերայ դրուած է կոնաձև գմբէթը, որ բաժանվում է 12 առանձին մասերի ներքեւինի պէս զոյգ միմեանց կից սիւնակներով, որոց բարձրում, քանդակագործ վերնախարիսխների վերայ, յենուած են բազմաձայլ, եռանկիւնաձև կամարները, որոց վերայով և բարձրանում է խոռողաձև ու փորուածքներով զարդարուն գմբէթը, սորա գագաթից թափուած են մի քանի քարեր և ուղղակի ձգուող ճառագայթաձև շերտերը տեղ տեղ մաշուած են և կործանուած: Այս գաւազանաձև շերտերի ներքին ծայրերում ըստ բաւականին նուրբ կերպով շինուած են մի մի հասաղաւնիներ, որք, թերևս, արապայտում են Վեսան Սարգսի առաքինի բարուց և վարուց հետ, նորա հոգւոյ ազաւնիի չափ անմեղութիւնը...

Ս. Սարգիսը 'ի ներքուստ խաչաձև զիրք ունի, մի հաս պատարագի ծոցաւոր սեղանով և 4 առանձին խորաններով զոյգ հանդիպակաձ բազմամալ խարիսխների վերայով անցնում է մանկաձև շրջապար, որ պահում է քանդակագործ գոաւոյ հետ նաև կոնաձև գմբէթը:

Սեղանի ձախ կողմում նկատելի է մի արշին բարձրութեամբ և նոյնչափ լայնութեամբ մի մուտք, որ քարեայ սանդուխներով ամուսն է ծածուկ պահարանը, իսկ այնտեղից մի քանի պոյսաներով բարձրացնում է եկեղեցու ձեղունը. պարզ է, որ մի ժամանակ այդ պահարանը ծառայելիս է եղել եկեղեցու հարստութեանը, այդ տեղ պահուելիս են եղել ոսկեղէն և արծաթեղէն անօթները, սրբազան միւռոնը, թանկագին աւետարաններ, հոգևորական զգեստներ, թագաւորական հրովարտակներ, հայրապետական կոնդակներ և այլն, բայց կողոպտիչ ձեռքերը կարողանալով մերձենալ, դատարկութեան և կործանման մասնեցին, և մինչև 1878 թիւը՝ թաւրք աւազակները, իւրեանց աւարներին պա-

հարան էին դարձրել, բայց յետոյ Յարութիւն վարդապետ Չթճեանի հսկողութեան ներքև անցնելով՝ առ հասարակ Խնձկօնից Սրբաւայրերը կարողացել են ազատուել սրբապիղծ մահաճակատների աւերադ շիրաններից:

Ս. Սարգիսը շրջակայ գիւղերի և, ըստ մեծի մասին, Աղէքսանդրապօլ քաղաքի բնակչաց օժանդակութեամբ, բաւականի զարդարուն կերպարանք ստացած է. ունի մի քանի պատկերներ, արծաթեայ խաչեր, արծաթաշէն և այլ մետաղներից շինուած զանազան անօթներ: Այն տեղ առաւօտ երկկոյ կատարվում է քրիստոնէական եկեղեցւոյ ժամասացութիւնը կատարելապէս: Վարդապետին, Աճաճին և ուրիշ տօն օրերին յաճախում են ջերմեւանդ ժողովրդից բազմաթիւ ուխտաւորներ:

Այս տաճարը արտաքուստ ութը կտոր արձանազրեր ունի, որոնցից առաջինը մակագրուած է հիւսիսային որմի վերայ՝ ՆՁԻ հայկական թուականին Սմբատի թագաւորութեան և Պետրոսի հայրապետութեան ժամանակ, որ յիշում է հիմնադրի, Վեսան Սարգսի, Ս. եկեղեցւոյն արած զոհարութիւնը, որ նուիրել է Տիկօսի վանքի մօտ, Արասի գետի ելքում գտանուող իւր այգին. իւրեան արեւշատութեան և ծնողների մեղաց թողութեան համար, պարագ քնելով Վանահօր վերայ՝ տարին չորս «քառասունք» կատարել, քանի որ կենդանի են իւր ծնողքը, իսկ նոցա մահուանից յետոյ իւրեանց (երեւի իւրեան և իւր ամուսնոյն) հակառակ դէպքում անիծում է նորան (չ'կատարողին) Յուդայի, օձի և Այլէնի մեղքերով:

Սորա աջ կողմում գտանվում է երկրորդ արձանազիրը, որ փորագրուած է Ութ թուականին, խաչատուր Շիկիանցի և նորա Աւագ Տիկին ամուսնից, որոնք յայտնում են, թէ Խնձկօնից սուրբ ուխտին միաբանելով՝ նուիրել են նորան իւրեանց հայրենի աներն, որ «Պաւղոսեց Ս. Սարգսի» դէմն է, և մի կրպակ (կուղպակ) «Որ 'ի վերայ ճառագուկակին է», և Յովհաննէս ու Պաւղոս վարդապետների անօրինութեամբ, վանքի միաբանու-



2

Թեանը պարտաւորացնում են տարին 12 պատարագ մատուցանել. Գ. Խաչատուրին, Գ. Եւագ-Տիկնոջ, և Ե. Եպիրատին: Կուիրած աները գտանվում են Ենի Մայրաքաղաքումը, «Տիգրանանցի Գուան» մօտ:

Երրորդ արձանագրութիւնը գրուած է Ութ թուականին, որ յիշում է հայր Պաւղոսի ձեռամբ եղած նորոգումը, որի փոխարէն եկեղեցու սպասաւորքը ստանձնում են պարտականութիւն քառասուն ժամ և ամեն տարի մէկ օր պատարագ կամ Ժ կանոն ազօթք անել. արեղային երկու քառա-

ՅԾԻ հայրապետներից նշոված լինի, և սուրբ երրորդութիւնից չ'գանի ողորմութիւն:

Հինգերորդը՝ գրուած է սորա ներքև Ութ թուականին. Եմիր Սպասալար Շահանշահի Ռուճայ զօրավարի որդի Գափիկից, որ իւր հալալ արդիւնքով գնել է մի այգի և նուիրել Ս. Սարգսին, որ անուանվում է «Ղորչնազէն» և գտանվում է Բազարանումը. այս զօհաբերութիւնը արել է նա՛ի յիշատակ իւր Շուշկան մօրը և Ղահրամ եղբօրը. եկեղեցւոյ սպասաւորքը սահմանել են Կաւասարդի տօնին պատարագ անել նրանց համար:



Ի ՏԵՐ ՀԱՆԳՈՒՅԵԱԼ ԿԱՅՈՐՆ ԱՂԵՔՍԱՆԳԻ ԵՐԿՐՈՐԳ:
ВЪ ВОЗЪ ПОЧИВШИИ ИМПЕРАТОРЪ АЛЕКСАНДРЪ II.

սունք «և հայրն լաւ մատաղ առնէ». խափանողները նշոված լինեն:

Չորրորդը՝ գրուած է հիւսիսային կողմում, կամարի վերայ Ութ թուականին հայոց և վրաց Օւաքարիայ Սպասալարից, որ իւր հոգւոյ փրկութեան, հարազատ որդու Շահանշահի և եղբօր Իւանէի արեւշատութեանը համար նուիրել է. «Օվասկափող Մշկարեւղոսին և այգի մի ՚ի Բազարան և Շինականի», որոց փոխարէն եկեղեցւոյ միաբանները խոտացել են «Ղուրբ Սարգսի աւագ Բանն անխափան պատարագ առնել և միջնորդութեամբ Գաւթի որդւոյ Շոթուայ». այս յիշատակի խափանողը՝ օձի, Վայէնի, Յուրայի և խաչահանուաց անէճքը առնէ,

Վեցերորդ յիշատակարանը փորագրուած է զրան Ծակատին Ութ թուականով, որից երևում է որ Բանաւոր անուանով մի մարդ իւր Տղատիկին ամուսնի հետ միաբանել է սուրբ ուխտին և ընծայել են նորան իւրեանց ունեցած «Գանձագին, այգին, որ կոչվում է «Եզտորն», և գտանվում է Մրենումը. ընծայել են նաև մի «մեծագին» աւետարան Եբրահամ Եպիսկոպոսի ձեռամբ, իսկ եկեղեցւոյ սպասաւորքը խոտացել են Ղազարու տօնին պատարագ անել կէսը՝ իւրեան, Բանաւորին, և կէսը իւր Տղատիկին ամուսնուն: Այս յիշատակարանի ճշգրութեամբ կատարողները օրհնուած կ'լինեն Քրիստոսից, իսկ խափանողները՝ որդւոյն Աստուծոյ փառքից զրկուած:

„Маякъ Арменіи“ 1881 г.

Եթե թերութիւնը՝ դրուած է սորա բարձրը, պատու-
հանի ճակատին ՈՁԸ հայկական թուականով, որ
յիշատակարան է Անեցի Սամուէլ երէցի թու,
Սարկաւագ անունով քահանայի որդի, Աբրահամ
երէցին, որ նուիրել է Խնձիօնից ուխտին երկու
Նորաշէն տներ և երկու կուղպակ, Տէր Աբասի և
Պաւղոս Վարդապետի առաջնորդութեան ժամա-
նակ, որոց փոխարէն եկեղեցւոյ սպասուորքը պար-
տաւորվում են տարին Վպատարագ մատուցանել,
դոցանից ք Աբրահամին, ք պապերուն, և ան հար-
կեակին. իւր «ժամերից» ապրիսէ նա և ք խոցա-
ղեղին, ք Յովհաննէսին, ք Տիրացուն, և ք Շահ-
մամին: Իսկ նա՝ որ յանդգնի իւր նուէրը վա-
ճառել կամ զբաւ զնել, չ'գանի Աստուածանից
ողորմութիւն: Գրիգոր աշխատողին էլ մէկ ժամ:

Ութերորդը՝ հիւսիսային կողմում մակագրու-
ած է, որ մեր, գրեթէ, բոլոր ճանապարհորդներին,
մանաւանդ Սարգիս Եպ. Գլաւախանի ուշադրու-
թեանը արժանացած չ'լինելու առթիւ, թէև ցան-
կալի էր ինձ այդպիսին օրինակելով լոյս հանել,
բայց, դժբաղդաբար, հանգամանքները արգելք եղան
զիտաւորութեանս իրագործմանը.....

ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾ ԽԱՉԱՐՉԱՆԸ:

Մի փոքրիկ և անպաճոյճ պատով Սուրբ Սարգ-
սին կից է քանդակագործ խաչարձանը, որ գորշ,
կարմիր և մութ-զեղնագոյն քարերով հաստատուած
է, Սուրբ Սարգսին թերևս ժամանակակից:

Երկու կողմերում գեղեցիկ ներգաշնակութեամբ
դրուած են գաւազանաձև և հարթ սիւնակները,
սրանկիւն խորշերով և զարդարուն խոյակներով
կամ վերնախորհիսներով, որոց վերայ և յինս
են վերին մասի բազմաձալ շերտերը:

Խաչի պատուանդանը, որ սկսվում է գեանից կէս
սաժեն բարձրութեամբ երեք կարգ սանդուխների
կամ աստիճանների վերայով՝ ներկայացնում է մի
բոլորչի արեգակնաձև քանդակ, օրի վերայ և հաս-
տատուած է քառաթև խաչը իւր մանր և գեղե-
ցիկ փորուածքներով: Չեղունը՝ որ կոնաձև զիրքով
երբու մասերի է բաժանուած, զարդարուած է փո-
քրիկ, կիսաբոլոր շրջանակներով ձգուած ուղիղ
շերտերով: Հիւսիսային և արևելեան երեսները
մերկ են, հեռուապէս և զուրկ փորուածքներից, իսկ
հարաւային օրմի վերայ դրոշմուած է մի համառօտ
արձանագրութիւն, որ ծածկուած է եկեղեցւոյն
կից օրմով:

ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԹԱԹԻՆ:

Ս. Սարգիս եկեղեցւոյ հանդէպ, դէպ 'ի հարաւ,
9 սաժեն երկարութեամբ մի հին շինութեան մնա-

ցորդով, կից է նորան Սուրբ Աստուածածնի եկե-
ղեցին, որ հիմնարկուած է 955 Փրկչական թուա-
կանին և չէ յայտնի թէ ինչպիսի անձնաւորու-
թեան յիշատակ հաստատուած է:

Այս մենաստանը՝ որ բաւականի աւերուած է
և թերևս հիմնադրութիւնից մինչև ցայժմ աւ-
կաւին չէ նորոգուած, հաստատուած է մութ-
կարմիր, սև և զորշ քարերով, որ բաժանվում
է 16 առանձին մասերի, որոնց մի-մի հասար ուղիղ
և աւելի լայն, իսկ միւսները՝ նեղ և եռանկիւնի
զիրքով դրուած են, որոնք և ապրիս են եկեղեց-
ւոյն բազմախորշ, 16 անկիւնանի, հեռուապէս և
բոլորչի ձև:

Ունի երկու դռներ, հիւսիսից և հարաւից:
Հիւսիսայինը կիսակլոր կամարի տակ պահուած է,
որի՝ զոյգ, հանգիստիսց կողմերի դաւազանաձև
սիւնակները, ըստ մեծի մասին, փշրուած են և
քարերից թափուած: Հարաւային դուռը բացվում
է մի քառակուսի և սիւնաւոր շինութեան միջից,
որ, հաւանական է կարծել, թէ զանկակատուն
կամ նշխարատուն եղած է, բայց ոչ Ս. Աստուա-
ծածնին ժամանակակից, այլ ուշ շինուած և շուա
աւերուած: Այս դուռը մի հասարակ և անպաճոյճ
քառակուսի շինուածք է, որի բարձրում, պատի
վերայ նկատելի է դրոշմուած երկար դօրիաձև
արձանագրութիւնը. այս մակագիրը մի ժամանակ
ծածկուած է եղել զանկակատան կամարովը, որից
հեռուում է և այն կարծիքը, որ ես յիշեցի վեր-
ևում, թէ դա եկեղեցւոյն ժամանակակից հիմ-
նարկութիւն չէ:

Երտաքին կողմից շրջապատը 16 սաժեն է:

Հիմքը դրուած է արևելեան կողմից անդնդախոր
ձորակի դազաթի ծայրերի վերայ, երկու աստիճան-
ներով, որոնց ամեն մինի բարձրութիւնը հաւա-
սար է 9 վերշաքի. ունի ընդամենը 16 հատ նեղ և
երկայն պատուհաններ, որոց շրջանակները զարդա-
րուած են մանր, կիսաբոլոր-քանդակագործ կամար-
ներով, պատուհանների բարձրից անցնում է երկու
կարգ միատեսակ քանդակներով մի դօրի, իսկ սու-
րանից հազիւ թէ 2 արշ. բարձրութեամբ դրուած է
երկրորդ դօրին կամ դառնիզը, օրի մանր նկարները
գրեթէ անազարդ դրութեամբ նկատելի են տեղ տեղ:

Չեղունը բնութիւնից այնքան վնասուած է, որ
նորա վերայի ճառագայթաձև ձողերը իսպառ ան-
հետացել են և իւր հարթ դրութիւնը կորսնցնելով՝
կաուրը մի տեսակ կանաչախիտ բլրակ է ներկա-
յացնում, ուր քարի և հողի շեղջերի միջով
բարձրանում է կոնաձև գմբէթը:

Չեղունի վերայ գմբէթի ներքին մասերը դրուած
են քառակուսի ձևով, որոց վերայով անցնում է,

ամեն մի կողմից կէս սաժեն երկարութեամբ, երկու կողմերինը փոքր ինչ ցածր, հասարակ և անպաճոյճ գառնիզներ: Այս գառնիզների վերայով գմբէթը ստանում է ութը անկիւնանի զիրք. ամեն մի անկիւնի հետ, հասարակ խոյակների վերայով ձգուած են օձաձե, միմեանց զալարուած սիւնակներ, որոց վերայ դրուած են սիւնակների լայնութեամբ և զեղեցիկ ճարտարապետութեամբ զարդարուած եռանկիւնի գառնիզներ կամ կամարներ: Այս վերջինների բարձրից, ուղիղ գծով, ձգուած են խոռոչաձե գմբէթի լայն մասերը, որ բարձրանալով յետ գլխատ աւելի սեխմվում են և նեղանում ու թեքուելով եկեղեցւոյ ուղիղ կենարոնը՝ գմբէթի ծայրը՝ ստանում են մի տեսակ բազմախորշ կամ բազմաձալ կերպարանք: Այս եկեղեցին իւր արտաքին տեսքով փոքր ինչ Ս. Սարգսի նմանութիւնը՝ ՚ի միտ է բերում, այն զանազանութեամբ միայն, որ սա տեղատեղ կործանուած է և կանաչ մամուռով ծածկուած, մինչդեռ միւսը՝ նուրբ և գրեթէ բոլորովին անաղարդ զրութեամբ մնում է տակաւին:

Գմբէթի հարթ մասերի մէջ կան նեղ և երկար պատահաններ կիսաբոլոր, քանդակագործ կամարներիով, որոց բարձրում գտանվում են մի-մի հասարակուսի զիրքով մանր խաչարձաններ:

Եկեղեցւոյ արեւմտեան որմի ճակատին, լուսամուտների ներքև քանդակներով զարդարուած մի տափարակ կարմիր քարի վերայ դրոշմուած կայ հետեւալ արձանաղիւրը՝

«Այս դուռն Տեառն է և արդարք մասնեն ընդ սա»:

Բացի սորանից և զանկատան կամարի տակ պահուած յիշատակարանից, Ս. Աստուածածինը արտաքուստ ուրիշ մակադրութիւն չունի:

Ի ներքուստ խաչաձե զիրք ունի և բաժանվում է չորս կիսաբոլորակ լայն մասերի, երկու նեղ և մութ խորաններով, որոնք և կազմում են արտաքին կողմից երկու աւելի լայն եռանկիւնի մասերը:

Եկեղեցւոյ չորս մասերը բաժանող բազմաձալ խարիսխների վերայ, որոնք տեղ տեղ քանդուած են, ձգուած է մանկիաձե շրջապատը, իսկ այս վերջինի վերայով անցնում է մի հասարակ գօտի, որի վերայ և ամբառնում է կիսաւեր գմբէթը:

Պատարագի փոքրիկ սեղանը մնում է տակաւին անաղարդ զրութեան մէջ, որի միջից գրեթէ մէկ արշինաչափ դռան միջոցաւ բազմաստիճան սանդուխները բարձրացնում են մանողին եկեղեցւոյ ծածուկ պահարանը և մամուսպատ կտուրը:

Ս. Աստուածածինը թէ յարտաքուստ և թէ ՚ի ներքուստ աւելի հարուստ է զեղեցիկ փորուածքներիով, քանդակներով և մանուածքներով, թէ և անգութ ժամանակի հոսանքը աւերմունքի, հետեւապէս և տգեղութեան մասնաձե է...

Սեղանի աջ կողմում գտանուող խորանի որմին դրոշմուած կայ քսան շարքից բաղկացած մի արձանագրութիւն, որի կէս մասը միայն կարգաւոր կարող եղայ ես. իսկ մնացեալի գրեթէ բոլորովին աղաւաղաւած և փշրուած լինելու առթիւ, անհնարին է կարգաւ կամ ճշդութեամբ օրինակել, և որովհետեւ մինչև ցայսօր մեր ճանապարհորդներից գրեթէ ոչ ոք չէ ստանձնել (որքան ինձ յայտնի է) նեղութիւն այս (որքան էլ կուզէ աննշան լինի) յիշատակարանի հետ ծանօթացնելու, վասնորոյ աւելորդ չ'համարեցի այդպիսին այստեղ օրինակել:

«Կաման Աստուծոյ և անուամբն հաւր և որդւոյ և սուրբ հոգւոյն կամ եղև ինձ հաւրս Եղեայի և սուրբ և առաքինստեր չգնաղգեստի կրանաւորի Գրիգորոյ եկեղեցւոյանի և ամենա արժանացեալ քահանայիցս և ծերոցս և միաբան սուրբ ճողովիս զայս մատուան ՍՅԻՍԷԻ պահին քի ժամարարի երէք քառասունք զվարդավառին հաւրն և մաւրն և այլ ում ինքն ստեց ուր կնք կենդանի է և ինձ»...

ՓՈՔՐԻԿ ՆՎՈՒՂԸ:


Այս եկեղեցւոյն կից է մի փոքրիկ քարեայ կամարակապ՝ Նվուղ, որ Ս. Աստուածածին և Ս. Կարապետի տաճարները կցում է միմեանց հետ: Սա երկու և կէս արշին լայնութեամբ 2 սաժեն բարձրութիւն ունի:

Այս Նվուղը հնումն ժամհարների կամ եկեղեցական ուրիշ ստոր պաշտօնեանների կացարան պէտք է կարծել. հաւանական է նաև հոգեսէր միայնակեացների ճղնարան անուանել... մուտքը արեւելեան կողմից է, որ կիսաբոլորակ շրջանակով 2 1/2 արշին բարձրութիւն ունի. այս որմը ուղիղ և հարթ կերպով շարուած է կոփածոյ, կարմիր և մութ-դեղնագոյն քարերով, որի գագաթին սկրզբում ելել է նեղ և քանդակագործ գառնիզ. գառնիզի գրեթէ շատ աննշան մասերը միայն նկատելի են այսօր. ձեղունը խախտուած է և համարեա սրբատաշ քարերից իսպառ մերկացած: Բնութիւնը մաշկեցուց, ժամանակի հոսանքը աւերեց այդ շինութիւնը, թէ հայութեան օխերիմ, վայրենի քուրդը կամ Փանատիկոս զուռանի որդին բնաժինջ արեց...

Կարապետ Թովմանջանեանց:

(Շարունակեցի):





ՓՈՒԱԿՐՈՒԹԻՒՆ ՄԱՐՄՆՈՅ ԿԱՅՍԵՐ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ ԵՐԿՐՈՒԹԻ Ի ՉՄԵՌԱՅԻՆ ՊԱԼԱՏԷՆ Ի ՊԵՏՐՈՍ-ՊՕԼՈՍԵԱՆ ՏԱՀԱՐԵՆ:
 (ПЕРЕНОСЕНИЕ ТѢЛА ИМПЕРАТОРА АЛЕКСАНДРА II ИЗЪ ЗИМНЯГО ДВОРЦА ВЪ ПЕТРОПАВЛОВСКІЙ СОБОРЬ.)

(Պատկերիս քիչն պատրաստեց յառաջ սեր Տ. Գրիգոր Տամար):

ՄԵՂՔ ՀԱԶԱՐ

(ՄՐՏԱՏԱՊ)

Նա մի կոյս էր փառասեր,
Ինչպէս գարուս կոյսեր շատ:
Յինէն փառք չէր սպասեր,
(Ես ի՞նչ ունիմ սրտէ զտա):
Առաւ մի ծեր ապիկար,
Մոռացաւ երգումն իւր ահեղ,
Արդ գշտոյ է ամեն տեղ,
Կոյս հասակին մեղք հազար:

Երեք գարուն շարունակ
Կրգար ինձ հետ ամեն օր,
Թմբիներուն ոտից տակ
Փոխանակել համբոյր նոր:
Որքան վարդ, իբրև գոհար,
Գրքած եմ ես իր ճակարին:
Նա ուղեց զարդ թանկագին,
Քաղած վարդիս մեղք հազար:

Երբոր հասաւ իր վերան
Մի տենդ ոյժգին, մահաբեր,
Որ բանալով իւր ճիրան,
Երկրէս իրել զայն կոյսեր,
Միրաքս վախով, զերդ յիմար,
Քանի՛ գիշեր ես անբուն
Կեցած եմ մինչև առաուն,
Հսկումներուս մեղք հազար:

Երբ կըլրկներ պարզապէս
Թէ յաւիտեան է իւր սէր,
Հոգիս խայտար և խենդէս
Աչերս արատք կըլեցուեր:

Եւ երբ իւր փառացն համար
Սրտիկս ըրաւ յուսահատ
Յաւէս կրկին լացի շատ,
Արատներն երուս մեղք հազար:

Երբ շքեմներն շառագոյն
Կըբացուէին, ես յաւէս
Չէի յուսար որ իսկոյն
Գուրս գար մի սուա ժպտանց հետ:
Եթէ մեծցուց գողարար
Նորա մայրիկն որ մի օր
Սըտէ ՚ի սէր, նորա մօր
Տուած կաթին մեղք հազար:

Անփորձ էակ որ կանանց
Չըգիտես սիրան ընել գոհ
Քոյ ապագան, լոկ քոյ անձ
Չէն բաւ որ տաս նոցա զոհ:
Բարեկամացս այժմ օտար,
Ոչ գերբ կ'ուզեմ և ոչ խաղ.
Հոգիս հիւժ է և դանդաղ,
Պատենութեանս մեղք հազար:

Բայց դժբողին՝ ճակարին բիծ,
Ամթն, անջինջ կը մընան,
Մինչդեռ իմ հոգն ու կակիծ
Կանցնին մեր կենաց նրման:
Հպարտ սիրտ նենգ չունենար:
Արդէն մի ձայն իմ ներսէն
«Աչո՛ւ» կըսէ հեգնօրէն,
«Սա աողերուդ մեղք հազար»:

1876

Տէգրան-Աշո՛ղ:

ՄԱՐՏԻ ՄԷԿԻ ԱՆՑՔԸ

ՕԳՈՍՏԱՓԸՆ Ազեքսանդր Երկրորդ Ապսեր զէմ՝ Մարտի մէկին կատարուած եղեռնազործութիւնը փոքր ՚ի շատէ յայտնի է մեր ընթերցողներին հանդիսիս նախընթաց տեսարակէն: Այժմ աւելորդ չեմք համարում կրկին վերադառնալ այդ անցքի պատմութեան՝ ապազրելով քանի մի պատկեր նորան վերաբերեալք:

Առաջին մեր պատկերն (էջ 5) ներկայացնում է Եկատարինեան ջրանցքը այն տեղով, ուր կատարուեցաւ Մարտ 1-ի զարհուրելի եղեռնազործութիւնը: Այժմ այդ տեղում կանգնեցուցուած է մի գեղեցիկ մատուռ, որի օձումը կատարուեցաւ Ապրիլի 17-ին: Բայց այս մատուռս ժամանակաւոր է, և նորա տեղ պիտի կառուցուի եկեղեցի ՚ի յիշատակ այդ ողբալի անցքին:

Երկրորդ մեր պատկերն (էջ 9) ներկայացնում է ՚ի Տէր հանգուցեալ Ապսրը դադաղէ մէջ:

Երրորդ մեր պատկերն (էջ 12 և 13) ներկայացնում է Ապսեր մարմնոյ փոխադրութեան փառաւոր հանդէսը Չմեռնային Պալատէն ՚ի Պետրոս-Պողոսեան տաճարն, որ գտանվում է Պետր-

բուրգի նոյն անունով յայտնի բերդին մէջ: Պատկերս այնքան գեղեցիկ է ներկայացնում այդ հանդէսը, որ առանձին նկարազրութեան անգամ բնակին կարօտ չէ:

Չորրորդ մեր պատկերն (էջ 16) ներկայացնում է հրապարակն Չմեռնային Պալատի առաջև, որի մէջ ՚ի Տէր հանգեալ Մարտի մէկին Ապսրն Ազեքսանդր Երկրորդ:

Հինգերորդ մեր պատկերն (էջ 17) ներկայացնում է Ապսեր կառքն, որի մէջ նստած՝ անցնում էր Նա Եկատարինեան ջրանցքի փողոցով, և որ վնասուեցաւ՝ նոյն փողոցում՝ նորա տակ ձգուած ուռմբէն:

Վեցերորդ մեր պատկերն (էջ 21) ներկայացնում է Պետրոս-Պողոսեան տաճարն, որի մէջ թաղվում են Ռուսաց Ապսերքը սկսեալ Մեծն Պետրոսից:

Այսպէս ահա ներկայ տեսարս ամփոփում է իւր մէջ Մարտ 1-ի անցքի գլխաւոր կէտերի պատկերները, որք յուսով ենք շնորհակալութեամբ կընդունվին մեր հեռաբնակ ազգայիններէն:

Հ Ա Յ Կ Ա Զ Ն Ե Ա Ն Տ Ա Ր Ե Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Կ. Պօլսոյ 23 Ապրիլ 1881.

ՓՈՒՆՆԵՅԱԿԱՆ ժամանակներու մէջ ազգերն կարող են փութացնել կամ յապաղել իւրեանց վերապահեալ վիճակն և այս ըստ ուղղութեան իւրեանց ընտրած ընթացքին: Այս ուղղութեան վերայ մեր ազգն այս ժամուս, առաւել քան ուրիշ ժամանակներն, պէտք է խորհի, որպէս զի այլ ևս ապարդիւն չը մնան բարեկաւութեան հասնելու համար եղած ջանքերն, վասնուած դրամն և վաճառուած ժամերն:

Շուրջ երեք տարի է ազգն հայկական ինդրէն կ'ակնկալէ անգին բարիքներ, բայց նորա յամբընթաց քայլերուն անձկանօք հեռեւած ժամանակն, ինքն առ խարխափ կը յառաջանայ իւր մասնաւոր ձեռնարկութիւններուն մէջ: Ժողովուրդն իրաւունք ունի աշխարհաւարական գործոց մէջ իւր իղձերն արտայայտելու, պաշտօն տալու Արչունթեան պաշտպանել իւր շահերն ամեն ուրէք, բայց լոկ այս մասին վերայ իւր ուշադրութիւնն դարձնելն մինչև մի աստիճան միայն արդարանալի է: Անշուշտ՝ քաղաքական բերմունքներն մի օր արմատական փոփոխութիւններ պիտի տան մեր ազգին յարաբերական վիճակին, բայց մինչև մեր այդ ըզձանաց իրականանալն պէտք չէ վայրկեան մի ևս մոռանամք մեր ներքին պիտոյից հօգն, այն որ ուղղապէս մեզ կը վերաբերի և որ բնաւ մի կապ չունի քաղաքական ինդրոց հետ:

Ազգային Արչունթեան կամ աւելի ճիշդ իօսելով Կ. Պօլսոյ Ներսէս Պատրիարքն, երեք տարի է ՚ի վէր կը գործէ ինչ որ կարելի է գործել աէրութեանց ոմանց տարտամական ընթացքին և ոմանց անյօժար դիտաւորութեանց դէմ: Ինչ կընէ այս միջոցին ժողովրդեան խեղճաս մասն: Առանց և իւր ազգու օժանդակութիւնն նուիրելու վարչութեան, այն է առանց և մի նիւթական զօհողութեան, մերթ կը հրճուի և մերթ կը վհատի ըստ դիպաց և երբեմն իսկ առանց լաւ ըմբռնելու մէն մի եղելութեան կարևորութիւնն, և այս իւր լոկ պղատմական պարտքն կատարելէ զնի, ձեռն ՚ի ծոց կ'սպասէ որ գան կրկին յուղել իւր միտքն:

Արդ՝ քաղաքական ինդրներն կարեն երկար աւան ծամծամիլ: Աշխարհաւարութիւնն շապ չ'զգար երբէք, բայց Հայն ժամանակ ունի կորուսանելու: Ամենայն ինչ քաղաքական բարենորո-

զումներէ սպասելն միամտութիւն է: Պէտք է մեր գործերը ինչ որ օգտակարն է մեզ անմիջական կերպով և ընդունիմք մի օր մեր ինդրոյն քաղաքականապէս լուծումն իբր մի անակնկալ մանուշայ:


* *

Բայց գործելու համար պէտք է որ մեր ուղղութիւնն ճիշտ և նպատակին յարմար լինի, ապա թէ ոչ յաւիտեանս անել ճանապարհաց վերայ կամ յոռի մի շրջանի մէջ թափառելու դատապարտուած կը լինիմք: Արդ՝ միթէ Կ. Պօլսոյ մէջ գտնուած անկախ և բազմաթիւ ընկերութեանց, միթէ մեր լրագրութեան, հրատարակութեանց, հրատարակախօսութեանց ընդհանրապէս ընդունած ուղղութիւնն անսաղիւս է բոլորովն: Մեք կը կարծեմք որ գաւառական ազգայնոց բարօրութեան համար աշխատող այս պարագլուխներն, որոց ջանքն և բարի կամքն յոյժ գովելի են թէպէտ, սակայն այնպիսի գաղափարներով սնեալ են կանխապէս, որք գործնական մտին չէն կարող ազգուսպէս յառաջ բերել այն բարիքներն որոց ազգն յանչափս կը կարօտի: Ընկերութիւնք, լրագիրք, հրատարակիչք, բանախօսք նկատելով որ գաւառացի Հայն Խաւարէ մէջ ընկղմած է, նկատելով որ այս խաւարն է իւր ամեն աղէտիցն պատճառ, տրամաբանօրէն կը հեռեցնեն թէ լոյս տալու է նորա: Յետոյ տեսականէն անմիջապէս գործնականին անցնելով, կը նկրտին ՚ի գործ զնել ՚ի Հայս եւրոպական կրթական նախադիմն: Պարոցներ կը բանան ուր երկրին անմիջական պիտոյից անյարմար դասեր կը խօսուին: Պարբերական թերթեր կը հրատարակին որոց պարունակած նիւթերն խորթ և անհասկանալի են այս ժողովրդեան: Յաւելացուցէք սոցա վերացական գաղափարներ տարածելու ձգտումն, անհիթիթ սկզբունքներու քարոզութիւններն և տակաւին և ոչ իսկ սաղմնական կենդանութիւն ունեցող հաստատութեանց համար որոշեալ օրերու մէջ արձակուած «Աեցցէ» ներն և կը հասկանաք զիւրաւ թէ այսքան ժամանակ վասնուելէն, այսքան զօհողութիւնք լինելէն վերջն, ինչն Հայաստանն տակաւին կը մնայ ուր որ էր մէկ քառօրդ դար յառաջ:

* *

Տարրական ճշմարտութիւն մի է՝ որ մի հիւանդ խնամելու համար նախ քննել հարկ է թէ նորա որ դործարանն է ախտացեալ: Մեր հայրենիքն օր քան զօր կը հիւծի: Ի՞նչ կայ տարօրէն նորա կազմուածքին մէջ: Այս կէտն է որ ամեն ընկե-
րութիւն, ամեն անհաս, գեղային գործողութեանց ձեւնամուխ չեղած, պէտք է հետազօտէ խորին ու-
շաղրութեամբ և ապա նորա ստածմանն սկսի:

Թղթակից նկարագրած է Հայաստանի բարոյական և տնտեսական վիճակն: Լուսաւորել: Արդ շատ առաձգական մի բառ է և միթէ սոսկ ընթերցմամբ, զրազխուութեամբ է որ մի ազգ կը լուսաւորուի: Անշուշտ պէտք է ուսուցանել դաւառացի Հայուն ինչ որ չը գիտէր, բայց հարկ է նախ տեղեկանալ թէ ի՞նչ է ամեն բանէ առաւել նորա անգիտա-
ցածն: Այդ տեղեկութիւնք են ահա որոյ համար



ՀՐԱՊԱՐԱԿՆ ԶՄԵՌՆԱՅԻՆ ՊԱԼԱՏԻ ԱՌԱՋԵՒ:
ПЛОЩАДЬ ПРЕДЪ ЗИМНИМЪ ДВОРЦОМЪ.

Ի զուր պիտի ջանան մեզ հակառակն պնդել, մեք կը հաստատենք բացարձակապէս որ գործող մարմիններէն և ոչ մին զՀայաստանն կը ճանաչէ: Ամեն ոք իւր երեւակայութեան մէջ և ըստ քմաց մի երկիր հնարած է այս անուամբ, ամեն ոք կը կարծէ նորա ցաւերն և յատկութիւններն գիտնալ և ՚ի ստիպել հարկին քերթողին բերանովն կողբայ կամ կը զովէ վայնս, բայց լաց ու զովաբանութիւն աւանդական մի արժէք ունին և եթ: Ա՞յլ ուսում-
նասիրած է նորա ճշգրիտ կացութիւնն: Ա՞ր լրագրի

անփոյթ կենալով բոլորովն, կոյր զիւրայն, նմա-
նողութեամբ, այնպիսի միջոցներու կը դիմեն գոր-
ծող մարմիններն, որք ստիպողականութիւն չու-
նին:

Հայաստանի ժողովուրդն այս ժամուս մեզնէ չը կամիր ուսանիլ յակոսնայներուն մէջ զանուած գետերուն և լեռներուն անուններն, չըխնդրիր ի-
մանալ մոլորակներուն միմեանց հեռաւորութեան

հաշիւն, հետաքրքիր չէ և դեռ երկար ատեններ պէտք չունի ծանօթանալու Հովերոսի, Շելլերի և Հիւկոյի գործերն և ոչ դրական և իմացական փիլիսոփայութեան մէջ եղած պայքարին տեղեակ գտնուիլ կրթաղձայ: Հայաստանի ժողովուրդն աշխատիլ կ'ուզէ որ հաց գտնէ, աշխատելու կերպն կրփափաքի ուսանիլ որ այն հացն ճիշտ ու առատ լինի: Այլ ջապէս կ'ուզէ որ ցոյց սաս իրեն թէ իւր հացն համբարելէն վերջն ինչպէս կարող է պահել զայն որ զրացինն չը յափշտակէ: Պէտք է տամք իրեն խրատ և միջոց որ ապարդիւն չը լինի իւր ճակտի քրտինքն, պէտք է որ նա այնպիսի մի

երիտասարդք չեն գնար մեծ քաղաքաց մէջ մնալ երկար տարիներ որ փող շահին, թունաւորելով իւրեանց կեանքն այն տեղեաց գարշահոտ մանուշղութիւն մէջ: Հայաստանի մէջ գրեթէ չը կայ մի անկիւն որ 'ի վաղուց իւր աւանդական և յատուկ վրազմունքն չ'ունենայ: Հարկ է ջանամք որ այդ արհեստաւորներն տակաւ առ տակաւ կատարելագործեն իւրեանց սեպհական ձեռագործներն, օգուտ քաղեն աւելի հողին տուած պարգևներէն և այս ուղղութեան ձեռնարկութիւնն ոչ կ'նձռալից եղանակաւ կազմակերպեալ ընկերութեանց կը կարօտի իւրեանց զիւաններովն, մասնաժողովներովն, յանձ-



ԿԱՅՍԵՐ ԿԱՌՔՆ ՄԱՐՏԻ ՄԷԿԻ ԱՆՅՔԷՆ ՅԵՏՈՅ:
ИМПЕРАТОРСКАЯ КАРЕТА ПОСЛѢ КАТАСТРОФЫ ПЕРВАГО МАРТА.

զիրք ստանայ 'ի շնորհս իւր արգասաւոր վաստակոց, որ զինքն շրջապատող ծոյն, ախմարն և յափշտակիչն բարոյապէս և նիւթապէս հարկատու լինին իրեն և նա տիրապետէ այնուհետեւ այն ամենուն վերայ որ չաջակցիր իրեն և որ անգործ կրպահէ իւր ձեռքերն արուեստից և երկրագործութեան մէջ: Մեծ և փոքր Հայաստանի մէջ եթէ կան այնպիսի կեղրոններ որք բազդասաւար անգործ կեանք կը վայելն և զարգացած են փոքր 'ի շատէ, նոքա 'ի շնորհս այս ուղղութեամբ ընթացանուն է: Փութամբ դիտելու որ այն գաւառներէն, ուր արուեստք կը գտնուին, ուր գիտնն շահաւոր ընել երկրին բերքերն, գաղթականութիւն գրեթէ չը լինիր: Այն տեղերէն ժիր ու առողջ

նախուճներովն, զրաբառեան և աշխարհաբառեան կուսակցութիւններով և ոչ իսկ մեծամեծ ծախքերով ազգին վերայ բեռնանալու պէտք կը դնէ: Գործնական և ամենապարզ միջոցներ բաւական են և անտեսական մասին մէջ իսկ, ինչպէս և դպրոցական դաստիարակութեան մէջ, վերացական և փուժ տեսականութիւններն ծիծաղելի ցնորքներ են:

* * *

Վ. Պօլոյ մէջ մի նորակազմ ընկերութիւն, առաւել քան զայլս բմբռնած կը թուի թէ անտեսական ուղղութիւնն է կարեօրագոյնն որ Հայաստանի տալ պէտք է, բայց նա ևս կ'երևի թէ

հետի չէ բոլորովն այն սկզբունքն որ Եւրոպական ուղղութիւնն նաև մեզ համար մերձեցուցանելի կը կարծէ, վասն զի կը տեսնեմք որ ամեն բանէ յառաջ երկրագործական մի դպրոց հաստատուի է 'ի Մուշ: Ի՞նչ բանի համար է այդ դպրոցն: Միթէ սա բացուած է, վասն զի Ֆրանսայի մէջ նոյն անուամբ մի դպրոց կայ 'ի Ղազինօն: Բայց Ֆրանսայի և Հայաստանի մշակութեան հանգամանքներն մի և նոյն են արդեօք: Ֆրանսան երկրին անձկութեան և հողին քիչ արգաւանդ լինելուն պատճառաւ, հազարաւոր արհեստական միջոցներու գիմել ստիպուած է որ բերքն աւելի առատ լինի, և այս նպատակին հասնելու համար ահագին գրամագլուխներ վասնզի կը գրուին: Նոյնն է միթէ և Հայաստանի համար ուր բնութիւնն ժլատ չէ բնաւ և մարդկային վաստակն հազարապատիկ կը վարձատրէ: Նոյն իսկ Ղազինօնի երկրագործական դպրոցէն արդէն բազմաթիւ Հայ աշակերտներ դուրս եկած են փայլուն քննութիւններ տալէ և վերայական ստանալէ վերջն, և սակայն, ինչպէս կըսէր շատ անգամ մեր հայրն, երկրին մէջ սոխ մ'աւելի չը բուսաւ:

* *

Համեստ լինիմք ուրեմն առ այժմ մեր ձեռնարկութեանց մէջ, չը թռնեմք այնքան բարձրերէն որպէս զի օգտի ժողովուրդն մեր ջանքերէն: Գոհանամք ամեն ուրեք խրատակէ երկրագործն, լասերմեր հայթայթեմք նորա, զիւրին միջոցներ ցոյց տամք հերկելու, քաղելու և քաղուածն շահաւոր ընելու համար: Մասնագիտաց ձեռք և բուն իսկ իւր դաշտին վերայ, և ոչ մի դպրոցի մէջ, զիւրացիին պակասութիւններն ցոյց տամք: Հայ զիւրացին, որ ամբողջ Եւրոպիոյ զիւրացիներէն աւելի ուշիմ է, լաւ կը գնահատէ իրեն շահաւոր եղած միջոցներն և երախտագէտ սրաիւ կընդունի մեր նուէրներն և մեր խրատներն:

* *

Բայց այսքանն չէ բաւական:

Հայաստանի ամեն կողմերն հոյն չէ միշտ զժողովուրդն կերակրողն և այնպէս լինելն լաւ է որ զաւառաց մէջ փոխանակութիւնք կարելի լինին: Հաստ գաւառներ արուեստն է ժողովրդեան ապրուստն և այս արուեստներն տակաւին իւրեանց նախնական անկատարելութեանն մէջ անգամ կ'ապրեցունեն ամբողջ զիւրիւր և քաղաքներ: Պէտք է որ գործող մարմիններն սոցա վերայ գլխաւորապէս դարձունեն իւրեանց ուշադրութիւնն, քաջալերին, ցոյց տան մասնաւոր անձանց ձեռք զայնս կատարելագործելու կերպերն, որ նոցա աշխատութիւնն

զիւրանայ և աւելի շահաբեր լինի: Եթէ լաւ միջոցներով գործաւորն հանգիստ գտնէ, հարստանայ, հաց ուտէ մի բաւով, նա ոչ ևս մեզ պէտք ունի իւր փոքրիկ դպրոցն հոգալու համար: Եւրոպիայի միսիօնարք, որք նոքա ևս 'ի սկզբան «լոյս, լոյս» կը գոչէին, ինչպէս Ս. Պօլսոյ մէջ նորաձեւութիւն է գոչել այժմ, հուսկ ուրեմն լմբանեցին սա ճշմարտութիւնն թէ մարդս ամեն բանէ յառաջ հաց կը խնդրէ, թէ անօթին քարոզել ունկնդիր չը կարէ լինիլ, և այս ուղղութեամբ է ահա որ կը գործեն մի քանի տարիներէ 'ի վեր: Օրինակ: Եյնդապի մէջ բացուած արհեստանոցն և այլք: Միսիօնարք այս միջոցով ընդհանուր ժողովուրդին համակրութիւնն առաւել կը վայելն այժմ: Նոցա այս նկատմամբ ստացած փորձառութիւնն, մեր գործող մարմիններուն խթան պէտք է լինի այն կերպով գործելու և ամբողջ Հայաստանի միւս գաւառներուն մէջ:

* *

Տարագագործութիւնն փոքր Հայաստանի մէջ մանաւանդ ամբողջ զիւրիւր զբաղմունքն է: Եւրհեստաւորք փոքր ինչ քաջալերութեան կը կարօտին, յօժարակամ մի ուղղեցոյցի պէտք ունին որ իւրեանց տարազներն կատարելագործեն, աւելի զիւրագին վաճառեն և աւելի մեծ քանակութեամբ յառաջ բերեն: Պէտք չէ մոռնալ որ արտաքոյ կարգի յաջողակ է այս մասին զաւառացի Հայն, որու ձեռագործք նկատողութեան առնելով ձեռքն ունեցած տարրական միջոցներն, հրաշալի են յիւրաւի և մեր պճնասէր և օտարամօլ Հայ քաղաքացոց ճաշակն չէին խանգարեր բնաւ կիթ զեջանէին իւրեանց ուն հայակերտ տարագով ծածկել:

Ալ յուզարկիմ ձեզ այսօր Աիւռինի Հայոց գործած բրդեղեններէն մի քանի օրինակներ: Աիւռինի մէջ այսօր մէկ աղքատ ընտանիք չը կայ և երիտասարդք օտար երկիրներ չեն երթար թափառելու: Սոքա բոլոր գաւառին հագնելու տարազներն իւրեանք կը պատրաստեն և մինչև յ'Եւրոպայ կ'արտածեն: Վննեցէք այդ օրինակներն և կրտեսնեք որ նոքա Եւրոպիայ գործուածներէն ոչ նուազ գեղեցկութիւն և հաստատութիւն ունին և 'ի նոցանէ աւելի զիւրագին են, վասն զի բուն երկրին բերքովն են հիւսուած: Մոսկուայի ազնուական Հայ տիկնայք թող տեսնեն այդ ձեռագործներն և թող 'ի հեռուսա մի համբոյր առաքեն իւրեանց Հայաստանի քոյրերուն բրտացիալ մատերուն *):

*) Յիշեալ բրդեղեններն ստացաք ճիշդ է մեր թղթակցի խօսքն՝ թէ նոքա Եւրոպիայ գործուածներէն ոչ նուազ գեղեցկութիւն և հաստատութիւն ունին: Ցանկացողքն կարող են տեսնել և քննել նոցա մեր մօտ: Հրատարակել:

Ար վատահասցնեմ զձեզ, որ այդ ճարպիկ աղջկունք յօռժ-Սանաի անունն տակաւին չեն լսած և սակայն երջանիկ են:

Եւ յժմ թող որ և է մի ընկերութիւն իրախուսէ այդ գործաւորներն, ընծայէ մի քանի պարզ մեքենայներ, ճանչցունէ ամեն տեղ նոցա տարազներուն ազնուութիւնն և քիչ ատենէն նոքա կարող են մրցիլ ամեն տեղի գործարաններու հետ: Ի՞նչ վատահասց աղբիւր հարստութեան: Հայաստանի ամեն կողմերն այլ օրինակ ձեռագործերու կեդրոններ անհամար են՝ Խարբերդ, Վան, Արարի, և այլն, իւրեանց յատուկ արուեստներն ունին որք սոցանէ ոչ նուազ հիացումն կը պատճառեն: Եթէ Ա. Պօլսոյ և ուրիշ մեծ քաղաքաց գործող մարմիններն և ժողովուրդն առհասարակ տեղեկանան միայն մանրա-

մանօրէն ամեն զաւառի բերքերուն և արուեստներուն վերայ, յայնժամ կը համոզուին թէ զխաւորապէս անտեսական ուղղութեամբն պէտք է խընդրեմք Հայաստանի բարօրութիւնն, որքան որ այդ բարօրութիւնն կարելի է ձեռք բերել իւր այժմեան կացութեան մէջ:

Եւ թող չառարկեն մեզ՝ թէ դժուարին են այդպիսի ձեռնարկութիւնք: Քանի որ բացարձակապէս չէ աշխատուած այս ուղղութեան մէջ, յանդգնութիւն է կանխաւ նորա ելքին վերայ խօսելն:

»Փարոս Հայաստանի« կը բաւականանայ այսօր միմիայն ազգայնոց ուշադրութիւնն հրաւիրելով այս կարևոր խնդրոյս վերայ: Ուրիշ անգամ առիթ պիտի ունենայ մանրամասնօրէն խօսելու այս մասին:



ՆԱՍՏԱԿ 'Ի 4. ՊՕԼՍՈՅ *):

Ա. Պօլս (Փերս) 28 Ապրիլ 1881:

Արկա-երէք ամիս Ա. Պօլսն ապրելով կատարելապէս համազունեցայ, որ եթէ ցանկալի է մեզ՝ ուսումնասիրելու անուն և սերտ յարաբերութիւններ ունենալ տաճկահայերի հետ, աւելի գործնական ու արգիւնաւոր ընթացք առ նոցա մէջ երկազող զանազան ընկերական շարժումներն, այն ժամանակ հարկաւոր է անշուշտ, որ ուսումնասիրելու յարակցութիւն ունենանք սոցա հետ ոչ միայն մեր լրագիրների միջոցով, այլ զլրատարապէս մասնաւոր կարեւոր անձանց երթի եկութեամբ: Խօսքս այնպիսի անձանց վրայ չէ, որոնք զայիս են Ա. Պօլսն կարճ ժամանակով լոկ փաստաբանութեան ու սլանանանների զափնիներ հաւաքելու համար, կամ թէ քառ քառ քառ ուր իր արամադրութեան տակ ունենալով, ազգակործան նպատակների համար մարդիկ որտալու ու հարկաւոր աղբիւրներէն բանադնելու համար խօսքս նոցա վրայ չէ ևս որոնք զայիս են պատեղ բոլորովին աչքերը կապած, ամեն բանից անտեղեակ ու չ'ունենալով նախադրող պրօգրամայ, որոնք պատոււ են ամեն տեղ ոչ նորա համար, որ մարդավարի ուսումնասիրութիւն անեն ու յետոյ քննադատական հաշիւ տան հասարակութեան, այլ նորա համար, որ քաղաքի խառնիճազանձ տպաւորութիւններով աչքերը կշտացնեն ու յետ դառնան տուն պէսպէս անեկտօսներ պատմելու համար:

Ոչ, խօսքս այնպիսի երթեկեկութեանց վրայ է, որոնց նպատակը նախ Պօլսը ճանաչելն է, իսկ ճանաչելուց յետ, ճշմարտութեան անմանջ մարտիկ իր ազգայինների անհանգուրժելի թղթութիւնները հարուածելն է: Եթէ չեմ սխալուիմ, միակ մարդ ուսումնասիրելից, որը այցելեց Պօլսը կատարելով անողորմ քննադատի ու անձնուրաց հայրենասերի դերը, եղաւ հանգուցեալ Մ. Նալբանդեանցը: Կ'ս' միայն եկաւ Պօլսն ոչ »քնքոյլ ու անոյլ« ձևերով և ստոր շողորթութեամբ քննած ազգայինների աչքին »դուրական« լինելու, ոչ առատ ձեռնհամբոյններով սորան-նորան խաբելու ու յետոյ նորա դէմ դաւեր լարելու համար, այլ մեր յիշատակելի հրապարակախօսը եկաւ Պօլսն իր դաժան ճշմարտախօսութեամբ ժամանակաւոր թշնամիներ, բայց մշտական բարեկամներ վաստակելու ու անմուտց երախտիք թողնելու համար (*): Այդ է պատճառը, որ մինչև հիմայ ևս հին թուրքախօս սերունդը կրկնում է միշտ Նալբանդեանցի անունը ասելով. »Եվէթ, եօյլէ ստամ տահա դէօրմէտիք« (այս, այնպիսի մարդ այլ ևս չ'տեսանք): Այսպէս է վարձարւում միշտ ճշմարտախօս մարդը, չ'նա-

խելով որ հանգուցեալը իր կենդանի ժամանակ ոչինչ չ'կարողացաւ լսել Պօլսեցիներից բացի կատարել գայրոյթ, ծանր վերաւորանք ու կոպիտ յիշող, բայց գայրոյթ ու վերաւորանք թղթակներին զինաթափ անելու համար են միայն, այլ ոչ թէ Նալբանդեանցներին... Միայն մտաւոր ու բարոյական թղթակների համար են սպասնալի յիշող ու յարձակմունք, այլ ոչ թէ վսեմ ու անաստան հոգիների թղթակները վախ ունեն միայն ամբօրի զրպարտութիւնից, որովհետև նոցա խիղճը այնչափ երկնու է, որ կ'սարսի իւրաքանչիւր խտուրթից...

Վիտող, խօսող ու գործների վրայ է իմ խօսքը, որոնց համար Ա. Պօլսի մէջ գործող մարմինները ներկայացնում են այնչափ առատ ու շնորհակալ նիւթ, այնչափ յորդ բարեաց ստպարեզ: Ա. Պօլսի ազգայինները այնչափ են երթարկուած դեղական պայմանների կործանիչ ազդեցութեան, որ նոցա համար հարկաւոր է միշտ նոր արտաքին զարկ, թարմ մտքերի ու գատողութիւնների ուժգին ընդհարումը, ազատ ու անխնայ քննադատական հարուածներ, առանց որոնց Ա. Պօլսի մեր ազգայինները միշտ կ'մնան կաշկանդված իրանց մէջ արմատացած կեղծ ու պատիւր փոխադարձ յարաբերութիւններով, մանր մանր ինտրիգաներով, շահախնդի շարժառիթներով ու երկրուն սկզբունքներով: Ազգային խողով, մասուլ, միացեալ ընկերութիւն, և այլն, բոլորն էլ առանց բացառութեան կարօտ են արտաքին զօրեղ բարոյական ու մտաւոր մղումների ներքին ուժերը այնչափ են մաշված կամ կաշկանդված, որ նոքա անընդունակ են որ և իցէ շարժող ու յառաջ մղող գորութիւն ունենալ, որ և իցէ ազգու ու գործունեայ դեր կատարել:

Մտքոյլ քսան տարի է, որ Ա. Պօլսի հայոց ազգային խողովը գոյութիւն ունի այս քսան տարուայ մէջ ոչ թէ միայն ոչինչ չէ արված հայրենեաց վիճակի իրական բարւոյքման համար, այլ ևս չէ ձեռնարկված Հայաստանի հասարակային պայմանների, կենսական խնդիրների, անհրաժեշտ պիտոյքների, նիւթական ու անտեսական զրութեան օրինաւոր ուսումնասիրութեան, որով կարելի լինէր ճիշդ հասկացողութիւն կազմել թէ ինչով է պայմանաւորված եղել այսչափ դարեր, բեր տառապանքների մէջ մեր պապերի երկրում հայի անուան պահպանվելը արուեստով, երկրագործութեամբ թէ մի ուրիշ գաղտնիքով: Ինչի մէջ է կայանում զլրատարապէս Հայաստանի գոյութեան ու ապագայի ետևան հիմունքը՝ նիւթական ու անտեսական բարեւութեան թէ վերացական գաստիարակութեան և և-

*) Ճշմարտութիւնը և Պօլսոյ մեր ազգայնոց ներկայ իսկական վիճակը յերևան հանելու համար՝ մենք պատրաստ ենք տպելու նաև ներկայ նամակիս մէջ դառնուած մտքերի հերքումը՝ եթէ այդպիսին ուղարկուի մեզ տպագրութեան համար: Հրատարակող

րևակայական զարգացման, որոնք են մեր երկրի բերքերը, ժողովրդի հակումը, ընդունակությունը, զբաղմունքների տեսակը, արդիւնահանութիւնը, բերքերը ագնուացնելու և մշակելու եղանակները, ինչպէ՛ կարելի է դարմանել գաղթականութեան արտին, որով իւրաքանչիւր ասորի միջին թուով մօտ 50 հազար հոգի է սփռվում աշխարհիս չորս կողմը, իր ամենաթարմ և զուարթ հասակի մէջ օրերը բեռնակրութեան և տաժան աշխատութիւնների մէջ մաշելու համար և այլն և այլն: Այս բոլոր խնդիրները և նոցա նման շատ կենսական հարցեր քսան տարուայ մէջ կարծես Պօլսի հայոց ազգային ժողովին բնաւ չէն վերաբերվել, որովհետեւ ոչ մէկը նոցանից չէ արժանացել լուրջ ուշադրութեան ու անմիջական որոշման: Այսպիսի ասոր պայմանների մէջ ի՛նչ հող տայ իր գլխին խեղճ պատրիարքը, որը լոկ անուամբ ազգային ժողովի գլուխն է համարվում. որչափ էլ ձգտէ մի բան յառաջացնել, դարձեալ նա ոչինչ չէ կարող անել առանց ազգային ժողովին ներկայացնելու, ինչպէս այդ սահմանված է սահմանադրութեան մէջ: Բայց ի՛նչ ասել է Պօլսի հայոց ազգային ժողովի ատենանի վրայ մի խնդիր զնել — այդ ասել է տեղի տալ անսպասելի պոռոտախօսութեան, անվերջ ատենադրութիւնների, ամենամանր կրքերի, անձնական շահերի և ՚ի վերջոյ ոչինչ արդէնքէ: Գամվելով այսպիսի վճատեցուցիչ գրութեան մէջ, խեղճ անօգնական պատրիարքը ստիպված գտնվեցաւ վերջապէս անել ինչ կարող էր կախեալ լինել իր անուանական իրաւունքից. նա չըջարեալան ուղարկեց բոլոր առաջնորդներին իսպիսկ արգելել գաղթականութիւնը. բայց միթէ սոված մարդին կարելի է զօտով զօղել գոյութեան մարքաման իրաւունքից և ինչից է այդ սովը — ոչ անցեալ տարուայ հայի պակասութիւնից, այլ նորանից, որ հայ երկրագործը, արհեստաւորը ու արուեստագետը չկարողանալով բարձրանալ աշխատութեանց ամենամանրական եղանակներից, և չկարողանալով այդկերպ վարձատրել իրան և լցուցանել բոլոր իր կարիքը, յուսահատվում է վերջապէս ու դառն արտասուքով բաժանվում իր մօրից, օջախից հեռու ու անհիւրընկալ աշխարհում իր ապրուստը դանդելու համար: Ղանտորոյ փոխանակ հենց մի օր խղճահարկելու և սպասվող հայրենիքի վեճակը անտեսապէս ու նիւթաւորապէս բարուքելու վրայ մտածելու, Պօլսի ազգային ժողովը ամբողջ ամիսներ է վատնում դարգակ ու անբովանդակ վեճաբանութեանց մէջ Հայաստանի մէջ որչա սփռելու համար: Երբ ինչո՞ք ժողովարարը կարօտ է նաև նախաի լուսին, իր մութ խրճիթը լուսաւորելու համար, ծիծաղելի չէ՞ արդեօք, որ Պօլսի «ազգային ժողովը» մտածում է միանգամից տալ նորան Ղօլթերի, Գեօթէի ու Ղիկաօր Հիւզօյի երևակայական ու ընդհանուր մարդկային լոյսը: Ո՞ր երկիրն է աշխարհում սոված փորով, մարմնը մերկ, ստերը բարկի, փոխանակ արհեստով ու երկրագործութեամբ իր նիւթական գրութիւնը բարդքելու, գնացել նստել այն սուտամարաններում, որոնք պիտի չնկնէ Հայաստանում ժրի փերի օրինակներում համեմատ... Միթէ անխիղճութիւն չէ այսպիսի բաներով ամբողջ ամիսներ անցնել «ազգային ժողովի» մէջ թողնելով լալիան ժողովարար մարդկանութեան ու տարեգրութեան մէջ, իսկ եթէ վերոյիշեալ օրինադրութեան համաձայն չինած մի աննպատակ ու խեղկատակ պրոգրամմա զբաղում է «ազգային ժողովը» ամբողջ երէք ամիս, կարող էր երևակայել թէ ի՛նչպէս է անցրել և որչափ արդիւնաւոր արել իր քսան տարուայ գոյութիւնը այս աղւային հաստատութիւնը:

Միւս ոչ պակաս տխուր հասարակային երեւոյթ ներկայացնում է այս տեղի հայ մամուլը, որի վրայ դժուար թէ մտքը կարող է այնչափ անմխիթար գաղափար կազմել, որչափ նորա հեռ մտակի ծանօթանալուց յետ: Մամուլ, որ ասել է հասարակութեան մտաւոր ու բարոյական զեկավարողը, անօգնական ժողովրդի շահերի պաշտպանը և նորա վեճակի վրայ խորհրդակցողը, Պօլսի մէջ հասել է մարդկային պատասանմանութեան ու աղտուութեան ամենատար անկման: Մտաբացիկութիւն, շողքըրթութիւն, շահասիրական երեսպաշտութիւն, ու անվայել վեճաբանութեան սովորութիւն, անխիստ յօգուածներ, անկախ ու առողջ դատողութեան կատարեալ բացակայութիւն, և հայ Պօլսի հայ մամուլի յատկանիշների մի մասը: Այսպիսի պայմանների մէջ ի՛նչպէս կարող է բարւոքվել Հայաստանի նիւթական ու անտեսական գրութիւնը, երբ մամուլը ծառայում է ոչ հայրենեաց ցաւերին, այլ միայն իր զբղանին...

Գիտամբ կերակրելով հասարակութիւնը զանազան ցնցողական լուրերով, մամուլը այդպիսով զբաղեցնում է ընթերցողների ուշադրութիւնը միայն օտար քաղաքականութեամբ, մնանալ տալով ազգային ժողովի, արանց և կանանց ընկերութիւնների մէջ տիրապետող աններելի սխալները ու թողլութիւնները, որոնց վրայ երբէք և երբէք չէ խօսում մամուլը, որովհետեւ նա անձնական շահ ունի այդ ազգային հաստատութիւնների մէջ, որոնց 46ֆն քաղաք չէ կարելի, որովհետեւ կրողարեան ստանալ այս ինչ կամ այն ինչ լրագիր: Եւ այսպիսով Պօլսի հայ մամուլը այն աստիճան վայր է զոյել իր վարկը ու անտանարկ արել իր կոչումը, որ խմբագիր ասված բառը հասարակել է այստեղ քսակահատի վրայ եղած հասկացողութեան: Այո, արդարութիւնը պահանջում է ասել, որ այս տեղի հայ մամուլի ներկայացուցիչների մէջ կան այնպիսիները, որոնք ձգտում են բարձրանալ իրանց աննախաձեւելի բարոյական և մտաւոր ընդհանուր մակերից, բայց դժբաղաւոր մեծամասնութեան կարծանիչ ազդեցութիւնը հասարակաց կարծեաց ու մտքերի վրայ այն աստիճան մեծ է եղել, որ կողական մարդիկ դժ ու յանդգնութիւն չունեն ընթերցանուր հասանքի ու ուղղութեան գէտ: Ե դժուար թէ իրաւունք լինի մեղադրել այդպիսիներին, երբ նոքա անկախ և իրանց կամքից կախեալ մարդիկ չեն, այլ հասարակութեան քմբից ու ծաշակից...

Ամենատոր տիպարը բոլոր այս տեղի հայ թերթերի կարելի է տեսնել թուրքախօս «Թերջիմանի Էֆքիար» լրագրի մէջ: Երևակայելէք մի հետաքրքիր երևոյթ, որը ներկայանում է այս լրագրի մէջ և որը մի կողմից յայտնում է Պօլսի ընթերցող հայ հասարակութեան փոքրագրութիւնը, միւս կողմից այս տեղի խմբագրական սապարկի յաջողութեան պայմաններու յաականիշները: Յիշեալ թուրքախօս լրագրի խմբագիրը, լինելով սկզբնապատճառ կաթոլիկութիւնը Հայաստանի ծոցում կեսարեայի մէջ տարածելու, ինչպէս ստում են կեսարացիք, իր շահասիրական շարժախիթների թելադրութեամբ, այնչափ է ընկած տեղիս հայ հասարակութեան աչքից, որ ոչ մի շջան, նաև նոյն իսկ հայ-կաթոլիկ չէ թողլ տալիս իրան մտաւելի լինել նորա համար: Ի վեճիկներում իրան այսպիսի բացարձակ զրուանքի, ահա ինչ միջոցի է գիմոյ պ. Չիվեկէքեանը. նա սկսել է հրատարակել հայոց տառերով մի թուրքախօս լրագիր զնելով նորա անունը հրատարակապէս «կարծեաց թարգման կամ ընդունող»: Այսպիսով լրագիրը առանց ամաչելու իր ձեւքով վաւերացրել է այն վերնագիր — յայտարարութիւնը թէ՛ լինելով հասարակաց օրգան, նա իր սեպհական կարծեք երբէք չէ յայտնի, այլ կրնգունէ այն, ինչ կ'յայտենեն ուրիշները: Այսպիսի պրօգրամ իր համար ընտրելու միտքը ամենքի համար շատ պարզ է, մանաւանդ հասարակութեան մէջ ամենքից շատ իր պատիւը գնահատողների համար, որովհետեւ «գիշերի կարծեաց Թարգման» լինելու պատրաստով Պ. Չիվեկէքեան սկսել է շատ լաւ հետամուտ լինել թէ ի՛նչ մարդ ի՛նչ թողլ կողմեր ունի, որի հուշակմամբ, իբր թէ լոկ «բէշեքե» կարծեք թարգմանելով, կարելի կ'լինի դուրս քաշել նոցանից այն, ինչ կազմում է իրան ասպարիզի ու հրատարակութեան միակ նպատակը... Այսպիսով, չ'նայելով թուրքախօս լրագրի սկզբնապատճառ բնասրութեան, քիչ ժամանակուայ մէջ նա կարողացաւ ձեւք բերել աւելի բաժանող, քան թէ որ և կից ուրիշ բուն ազգային լրագիր ամեն մարդ, որին ուղարկվում էր «Թերջիմանի Էֆքիար» չէր կարող վատահասուն մերժել բաժանողութիւնը, վախենալով ամեն տեսակ շանաժաններից ու մարդից: Եւ հետաքրքիր այն է, որ այդ լրագրի մէջ երևացող ոչ մի յօտուած չէ ստորագրվում իսկական անունով, այլ միշտ կեղծ անուններով այն պարզ պատճառաւ, որ միևնոյն մարդը կարող լինի զանազան անունների տակ զանազան մարդկանց վրայ ուղած ժամանակը մօր քսել, իսկ իր նպատակն հասնելուց չեք, նորանց գովաբանել: Խմբագրական լրագրի մէջ բացարձակապէս գործ է ածվում այսպիսի լեզու. «Եթէ չէք ենթարկվի մեր պայմաններին, այն ժամանակ մենք էլ չենք խնայել...» Ուրեմն լրագիրը հրատարակախօսի ուժը հասկանում է այն մտքով, որ նա կարող է մէկի վրայ ամեն տեսակ մար քսել ու կեղտոտ զրպարտութիւններ անել: Ի՛նչ մտաւոր ու բարոյական յառաջագիմութիւն կարող է անել մի հասարակու-

Թիւն, որը նաև անկարող է թօթափել իր վզեց մի լրագրի լրութեան ու բռնաւորական հարստահարութեան լուծը...

Վարով այժմ մտցեալ ու կանանց ընկեր-խնայերէն, գործ էլ շատ յետ չեն մնում ազգային ժողովի օրինակից ամենքը բերանը առած «լոյս, աշխարհ, փեղեր» խօսքերը սուսունում են միայն երևակայական աշխարհում ամպերից վեր, այլ ոչ իսկական Հայաստանի հողի վերայ: Այս տեղե լրագրութիւնը այնչափ է ապականել թարմ մարդկանց ճաշակը, որ վերջիչեալ ընկերութիւնների մէջ գործողները գործում են աւելի ճառանարան ոճերով գրված ծառերով, քան թէ իրական Հայաստանի անհրաժեշտ պէտքերը ու շաղրութեան առնելով: Եթէ մեկին նկատում ես իրանց նպատակների վերացական և ապարդիւն լինիլը, քեզ պատասխանում են «այո՛, բշտէ ձեր ասածը շիտակ է, հացի խնդիրը, արհեստ ու արուեստ տարածելը շատ կարեւոր է, բայց մեր նպատակը «լոյս սփռելն է»: Արածես թէ ամենքի նպատակը Հայաստանի բարօրութիւնը է, որով կարողանան այդ բարօրութեան համեմատ ճանապարհը իսկոյն փոխել, եթէ նա սխալ է ընտրած: Մինչդեռ այս տեղ ամենքը մտանայով, որ խօսքը նօթի ու արիւնաքամ Հայաստանի վրայ է, որը կարելի է կազմուրել միայն այն եղանակով, որով կազմուրված են բոլոր հարստ երկիրները՝ Ֆրանսիա, Անգլիա, Ամերիկա, Զվիցերիա, Բելգիա, և այլն, այսինքն նախ արհեստով արուեստով (industrie), իսկ յետոյ ոտանաւորներ ու Ֆրանսիայի յեղափոխութեան վրայ շարագրութիւններ գրելով, երևակայութեամբ վերացած գեպի աւրեգակի ու լուսնի մէջ տեղերը, միայն անմիտ բառերով «լոյս» են աղաղակում...

Ահա այս է պատճառը, որ սոցա համար հարկաւոր է միշտ արտաքին գորեղ ցրնցումներ, գործնական ու իրական մտքերի ընդհարումը և ազգու պրօպականդա կրահան Հայաստանի պէտքերի ու կարեաց համաձայն գործելը, այլ ոչ թէ իրանց բարբրված երևակայութեան ազդեցութեան ներքոյ: Իսկ այսպիսի թարմ հոսանք կարող է գալ միայն ուսաստանի գործնական ու ողջամիտ ինտելիգենցիայի կողմից... Թող ունենան այս բարիքը իրանց աչքի առաջ նոքա, որոնց կ'պատահի Ա. Պօլխ այցելել Բոսն ազգային նպատակաւ...

Վերջացնելով նամակս մտացայ խօսել Միսի Մկրտիչ Վաթուղեկոսի վրայ, որի հետ տեսակցեցայ մեծ բաւականու-

թեամբ մի քանի անգամ: Լրագրական լրերի ու խօսակցութեանց ազդեցութեան ներքոյ, ես ինքս այնչափ նախապաշարված էի խեղճ Զէյթունի աւիճի գէմ, որ չէի ուզում նորա հետ տեսակցիլ: Արթւապէս ներկայացաւ մի պատահական առիթ նորա հետ երես առ երես հանդիպելու և ուստուած քանի գառապարտելի խեղաթիւրութիւն ճշմարտութեան ու իսկականի: Որովհետեւ այս մասին գտնե քիչ ամփոփ ու հեռակայաբար խօսելու համար ամբողջ թերթեր է հարկաւոր, վասնորոյ կ'բաւականանամ միայն յայտարարելով, որ խեղճ կաթուղեկոսը չորս ամիս այստեղ ապրելով ոչ մեկին չէ կարողացել լսել տալ իր բուն միտքը ու գիտաւարութիւնը: Գարծեալ Աերսես պատրիարքը ոչինչ ոյժ չունէ առաջարկութիւնները քըննելու ու որոշելու համար, որովհետեւ ամեն բան պիտի որոշվի ազգային ժողովի առեանի վրայ քննադատվելով միայն, բայց թէ Բնչասել է ազգային ժողովն առեան, գորա մասին արդէն խօսեցինք վերը: Վասնորոյ ոչ դից չ'լաված Մկրտիչ Վաթուղեկոսը ստիպված է յետ գնալ շուտով ոչինչ արդիւնքի չ'հասած իր երկար ճանապարհորդութեան նորա միակ միտքը, առաջին և վերջին ցանկութիւնն է, որ կամ ազգային ժողովը հողատանէ կամ թէ իրան Աթուղեկոսին այց նիւթական միջոց մարտնչելու այն սուկայի շարեաց հետ, որը արմատ գնելով Այնթաբի մէջ, սպառնում է կլանել Հայաստանի բոլոր զաւակներին, գցելով նոցա բողբջականութեան ճիրանները: Այնթաբի մէջ բացված է մի մեծ արուեստանոց ու Բժշկական քոլեջից, որ գիմում են հայ գաւակները հազարներով, տեսնելով նորա մէջ հացի ազդիւրահա գորա գէմ է որ ուզում է մաքառել Մկրտիչ Վաթուղեկոսը, առաջարկելով կամ պահանջելով Ա. Պօլխի ազգային ժողովից հարկաւոր գումարը Արիւկիայի մէջ Բոսն հայկական ու ազգային արուեստանոց բացանելու համար, անգլիական քարոզիչների նպատակները ջլատելու համար, բայց ո՞վ է լսող խեղճ վհատեալ Աթուղեկոսին:




ՊԵՏՐՈՍ-ՊՕԼՈՍԵԱՆ ՏԱՃԱՐՆ Ի ՊԵՏՐՈՒՐԳ: ПЕТРОПАВЛОВСКИЙ СОБОРЪ ВЪ ПЕТЕРБУРГѢ.

Սրբազան Աերսես Պատրիարքի հրաժարականը Ազգային ժողովից չընդունուեցաւ և արին Արբանութիւնը բարեհաճեցաւ առժամանակ շարունակել Պատրիարքական պաշտօնը: Եւ Փառք Աստուծոյ...

Տպագրապետ Տատեան Եղիա Կֆենտին, որ բանարկուած էր Ազգային երգերի հաւաքածոյի առանց հրամանի տպագրութեան համար, վախճանեցաւ և թաղումը կատարուեցաւ մեծ հանդիսով:

Գրելոր Նեխորոսեան:



ԼՈՒՍԱՐԱՐԻ ՆԱՍԱԿՆԵՐՆ Ի Կ. ՊՕԼՈՍՑ

Կ. Պոլս. 20 Ապրիլ 1881.

Լսած էք անշուշտ, որ Մ. Փրկչեան Հե-անդանոց անուամբ գլխութեան ազգային յարկ մը կայ մայրաքաղաքիս մէջ: Այս հիւանդանոցն կը տարբերի սակայն թուրք հիւանդանոցներէն, որք յատկապէս հիւանդ լինելու նպատակաւ կառուցուած են և որոնց մէջ այնքան զբաղած է Կարբիէլ Հրեշտակապետն, որ ժամանակ չունի երբեմն հարստահարիչ քուրդ Պէյերուն այցելութիւն ընել: Մեր ազգային հիւանդանոցին մէջ կը գտնուին բաւական թուով յիմարներ,—չէ՞մ ըսեր թէ անկէ դուրս գրու-նուող յիմարներուն թիւն աւելի նուազ է,—ծերեր, անկարներ, անդամալքներ և ուսանողներ և այս պատասպարելոց թիւն գրեթէ միշտ հինգ հարիւրէն աւելի է: Ար յիշէք հարկաւ, որ թուրք կառավարութիւնն քանի մը ժամանակի ՚ի վեր զազրե-յուցած է այն հաստատութեան յատկացուցած օրական հացն ու միսն և հիւանդանոցին պատուարժան հոգաբարձութիւնն նուիրատուներ հանելով ազգայիններու գլխութեանը դիմած է մամուլ միջոցաւ: Արդ, այժմ կը լսենք, որ յիշեալ հոգաբար-ձութիւնն իւր ձեռքերուն կատարեալ յաջողութեամբ չպատ-կուիլն տեսնելով որոշած է պատասպարեալներու թիւն երաշխա-ւորեալ եկամուտներու գումարին համաձայնեցնել: Ինչո՞ւ մեր ազգայիններէն շատերը խուլ ձեւացան հոգաբարձութեան հրա-ւերին և ամեն ազգային գոնէ երկու դահեկանի նուիրատուներէն աւելելով չփութաց սնակցիլ փութաջան հոգաբարձու-թեան: Պատճառն զժբխտաբար շատ պարզ և յայտնի է. առանց վարձատրութեան բարիք գործելն յիմարութեան կարգ անցած է. և ոչ որ պատառ մը հաց կուտայ մուրաղիանի մը մինչև որ չհամոզուի թէ հետեւեալ օրը ազգային լրագրիներու մէջ պիտի յիշուի իւր այս բարեգործութիւնն և իւր անունն պատմութեան մէջ պիտի անցնի. ոչ որ ձեռք կը կարկուռ ծովու մէջ խեղդուող մը՝ մինչև որ պատուանշան մը չխոտա-ցուի իրեն: Պարտքը փառք կը համարուի, և եթէ մէկն իւր պարտքը վճարէ հացագործին՝ ամենէն կը փառաւորուի իբրև մարդ առ աքբին: Եթէ այս ընթացքը շարունակի՝ վաղը միս օր հայրերն ևս իրենց զաւակները չպիտի խնամեն՝ մինչև որ չխոտացուի իրենց թէ պատմութեան մէջ պիտի անցնին: Հիւանդանոցի պատուարժան հոգաբարձութիւնն եթէ հրա-պարակաւ յայտարարէ թէ նուիրատուներու անուններն լրա-գիրներու մէջ պիտի հրատարակուին՝ կը յաջողեր այս ձեռնար-կութեան մէջ և չէր ստիպուեր քուրդ հրամայեցէ՛ք ըսելու յիշեալ յարկին մէջ գտնուող ձեր, բայց առողջ կնկան մը, որ կենդանի պատմութիւն մը լինելով մեծ ծառայութիւններ կրնար մա-տուցանել ազգին, գրագիտներուն և բանասերներուն: Քանի մը բարեկամներու հետ ես ալ գացի օր մը այդ ձեր կինը տեսնելու:

- Եւնիւնէրներու վրայօք կրնան մեզի տեղեկութիւն ապ-հարցուեցաւ իրեն:
- Օրդոտի, այդ իրեկուան խօսք է, պատասխանեց ձերունին:
- Սուլթան Սիւլէյմանի ժամանակին վրայօք կրնաք մեզի խօսիլ:
- Ա՛հ, ըրաւ ձերունին. առանք նոր պաներ են, հին պա-ներ հարցուցէք ինձի, հին պաներ:
- Շատ լաւ. մեր նախնիքը գրաբան կը խօսէին թէ աշխար-հաբաւ:
- Գրապատը հիմայ է որ կը լսենք, մեր հայրերն գրապատի անունն անգամ չէին լսած, պատասխանեց ձեր ախկինը, որ անշուշտ Մ+ո Մէ-լէրէն աւելի հեղինակութիւն ունի այս խնդրոյս մէջ:

Ի եզրուպայքարը դեռ կը շարունակուի և Պ. Կարապաշեան կը ջանայ պատմական ապացոյցներով՝ երբեք երբեք և երբեք-ով, կող զոյր-լ քործեաց յերբէք ձերո՞ւմ, կամ ցո՛ւլ զի՞՞մ քոր-ծեացով հաստատելու ջանալ ինչ որ յոյները կը հաստատեն ողբերգո՞ւնիւններով և կարակերբո՞ւնիւններով, զորս ժողովուրդը կը ծափահարեր կամ կը սուլեր, ինչպէս որ մեր ազգայիններն կը ծափահարեն կամ կը սուլեն այսօր աշխարհաթուր, այս-ինքն՝ Արևելեան Մամուլ, Մասիսի, Մէտեօրայի, Փորձի, Փա-

րսի և Մեղուի լեզուով գրուած կամ թարգմանուած ողբեր-գութիւններն և կատակերգութիւններն:

Տեղը չէ աստ ընդարձակօրէն յայտնել մեր կարծիքներն. սակայն պարտ է մեզ խոստովանել թէ Պ. Կարապաշեանի փաստերն անոնցմէ միայն կընդունուին, որք օգտեալիս քուրդ գեղ առած են և բժշկութիւն գրած են: Ես վստահութիւն չունիմ նմանաբուժական գրութեամբ բժշկուող հիւանդներուն, ինչպէս որ կայսերական կառավարութիւնն ալ վստահութիւն չունի այլ ևս մեր ազգին վրայ: Այս անվստահութեան ցոյցերն թէ մայրաքաղաքիս և թէ գաւառներու մէջ երթալով կը շատանան: Բոլոր մաքսատուներու հրահանգներ զրկուեցան, որ առանց հրամանի ապուած գիրքերն վար գրուին և ՚ի հարկին հրամանաւ ապուածներն ալ արգելուին: Տպագրիչներն, գրա-վաճառներն և հեղինակներն կը խորհին թէ ի՞նչ ապեն, ի՞նչ ծախեն և ի՞նչ գրեն: Այս հրամաններն խիստ են մեր ազգին գարաւոր և հազար անգամ ապացուցուած հաւատարմութեան նկատմամբ, և, տարակոյս չկայ թէ բարեխնամ կառավարու-թիւնն ուշ կամ շուտ պիտի համոզուի այս ճշմարտութեան: Սակայն անվստահութիւնն նորութիւն մ'է հիմայ: Միացեալ ընկերութիւնն ալ իւր քուէովը յայտնեց, թէ կատարեալ վստահութիւն չունի իւր Տնօրէն Ժողովոյն վրայ, որ կը պա-տրաստուի, կրնն, իւր հրաժարականը տալու արդարացնելու համար անշուշտ յիշեալ ընկերութեան մասին Պ. Կիկոզ-սեանի գրածները: Ար յուսամք թէ արուելէք հրաժարականը գոհութեամբ պիտի ընդունուի և յաջորդ Տնօրէն Ժողովն պի-տի փութայ իւր ընթացքովն գոհացնել ընկերութեան ան-գամներն և կանոնադրապէս հաւաքել անդամներէն բաժին-ները *): Բայց ոչ խոստութեամբ ինչպէս որ կրնն գաւառներու մէջ հարկահանները տուրքերու հաւաքման մասին: Ազգային լրագրիները կիմացունեն՝ թէ տուրքերու հաւաքումն խոտու-թեամբ կը կատարուի գաւառներու մէջ մինչև ոմանց վաճառել իրենց անկողինն և շապիկն: Ար լսենք նաև թէ մեր ազգային-ներէն ոմանք այն կրօնքին կը յարին, որ քիչ տուրք կը վճա-րեն: Բողոքական ուսուցիչներն տուրքերու հաւաքման խոտու-թենէ օգուտ յարգելով սուտ խոտուներով խաբել և որսալ կը ճգնին մեր ազգայիններն, որք չպիտի յօժարին անշուշտ կրօնի վաճառականութիւն ընել: Ալ աւելորդ կը լինի կարծեմ, ըսել թէ բարեկարգութիւնն դեռ մնա գտած չէ Հայաստան և յայտնի ալ չէ թէ երբ պիտի մտնէ և ո՞ր կողմէ: Յունական խնդիրն գրեթէ լուծուեցաւ. օրակարգի հաշուով Հայկական խնդիրն գրուելու էր մէջ տեղ և սակայն ցարդ բան մը չ'լուսե-ցաւ. այս մասին: Արդեօք փոխուեցան օրակարգը:

Լուսարար:

*) Ապրիլի 26 ին ընկերութեան երեսփոխանաց ժողովն ըն-արեց Մեծ. Առաքել Ալթուն Տիրրի Էֆէնտի՛ն ընկերութեան նախագահ, և Մեծ. Տըքթօր Տիրրան Փեշիմալճեան Էֆէն-տի՛ն՝ Տնօրէն ժողովոյ նախագահ: Այս ընտրութեան մասին »Լոյսի« մէջ կարդում ենք.

»Այցեալ կիրակի օր տեղի ունեցաւ Միացեալ ընկերութեան երեսփոխանական Ընդհանուր ժողովն: Այդ նստին մէջ ինչ ինչ խնդրոց նկատմամբ տեղի ունեցած վեճաբանութեան մա-սին չեմք ուզեր կարծիք յայտնել. ուստի կ'անցնիմք ըսել միայն թէ Տնօրէն խորհուրդն՝ որ վերջնապէս կը հրաժարէր, ընդունուելով հուսկ ուրեմն նորս հրաժարականը՝ քուէից ա-մենաբացարձակ առաւելութեամբ Պետ ընտրուեցաւ Մեծ. Տ-Փեշիմալճեան Էֆէնտի, և Երեսփոխանական ժողովոյ նախա-գահ ընտրուեցաւ Մեծ. Ալթուն Տիրրի Էֆէնտի՛ն՝ նոյնպէս քուէից ամենաբացարձակ առաւելութեամբ: Յիշեալ անձինք, որք իրաւամբ ընդհանուր համակրութիւն և վստահութիւն կը վայելեն, և որք իրենց ծանուցեալ ազգասիրութեամբ մեծ վստահութիւն կը ներշնչեն, իրաւունք ունիմք յուսալու թէ ընկերութեան զործոց նոր զարկ և ազգայնոց ալ նոր մղում պիտի տան«:

Հրատարակ:

ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՈՒԵՍ

ԿԱՐՈՒՄ ԳԷԵԶԻ ԿԱՐԾԻՔՆ ԽԱՐԿՈՅ ԾԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ:

Հունգարիայում դուրս եկա մէկ ուսումնական, որ կամենում է հերքել մինչև ցայժմ արմատացած կարծիքները մարդոյ ծագման մասին: Այդ մարդ է Կարոլոս Գէեզի, նա վարուց չէ որ կարգաց մէկ հրատարակական ճառ, որ պատճառեց լսողներին ընդհանուր զուարճութիւն, թէև ինքն ճառախօսն նայում է իւր առարկայի վերայ շատ ծանր կերպով: «Մարդս, ուսուցանում է ուսումնական այրս, ելաւ գորտից և կրկին դառնալու է գորտ: Կախկին ժամանակներում կար մեծ գորտանման կաթնասուն մի կենդանի, որ ապրում էր ծովերի մէջ, բայց և կարող էր ապրիլ օդի մէջ, ինչպէս և ջրի մէջ. նորա գլխաւոր բնակութիւնն էր այսու ամենայնիւ դարձեալ ծովի աղի ջրերն: Այդ գորտանման կենդանին անուանվում է այժմ ճարչ և նորա ծովային լինին ցուցանում է այն, որ կարող չէ նա ապրիլ առանց աղի. կան և այլ շատ նշաններ. զորօրինակ՝ մնացորդքն լողալու գրիչների մեծ և ցուցական մատերի միջով, և մշանջնաւոր ձգտումն ջրային տարրին»: Հունգարացի ուսումնականս սաստիկ յառնում է Գարվինի վարդապետութեան դէմ. նորա կարծիքով՝ ոչ թէ մարդս ելաւ կապիկից, այլ ընդհակառակն կապիկն ելաւ մարդուց. կապիկն ոչ այլ ինչ է՝ եթէ ոչ վայրենացած, փոխարեւած մարդ: Երկրազնդիս ապագայի համար Կարոլոս Գէեզի խօսում է այսպէս. «լուսինն, ասում է նա, անդադար մօտենում է մեր երկրին, և անկասկածելի հեռեանքն այսպիսի մօտենալուն կը լինի այն, որ ծովային ջրերն կը ծածկեն փոքր առ փոքր բոլոր ցամաք երկիրը. այն ժամանակ մարդուս կը մնայ աւելի ոչինչ, եթէ ոչ կրկին վերագառնալ իւր առաջին կերպարանքին, այն է՝ լինել ջրային կենդանի-գորտ»:

ՄԱՔ ՔԻՆՆՕՆԻ ԳՐԻՉԸ:

Նոր գրիչն Մաք Քիննօնի ունի մատերի ձև, որ ՚ի գործ է դրվում գրպանի գրելութեան գրքոյկների մէջ: Կոթն ձևացնում է խողովակ՝ լցուած հասարակ թանաքով: Մայրն, որ գրելու է ծառայում, կունոնաձև է, և վերջանում է խողովակով, երկրորդ անուանեալ մետաղեց շինուած շատ գեղեցիկ: Շատ թեթև սեղմելու ժամանակ կոթը, թանաքն նորա միջից փոքր առ փոքր սկսանում է թափուել սուր ծայրում եղած ծակից թղթի վերայ և նոյն ժա-

մայն դադարում է ելանել, կրք դադարում էք սեղմել կոթը: Այսպիսի գրչով, լցնելով թանաքը մէկ անգամ նորա մէջ, կարելի է գրել 70—80 թերթ, և յետոյ կրկին հարկաւոր է լցնել նորա մէջ թանաք: Թանաքի բծեր անկարելի են, և կրք գրչի աւելի հարկաւորութիւն չկայ, նա փակվում է, այնպէս որ թանաքը նորա մէջ ոչ չօրանում է և ոչ թանձրանում: Հարկաւոր է գործ ածել լաւ թանաք. նա լցվում է կոթի մէջ շատ հեշտ մէկ առանձին գործիքով, որ լինում է գրչին հետ: Երկրորդ՝ որից շինվում է գրչի ծայրն, ինչպէս յայտնի է, ամենապինդ մետաղներից մին է և չէ մաշվում: Բնկերութիւնն, որ պատրաստում է Մաք Քիննօնի գրիչները Կիւ-Նօրբում, արածութիւն ստացաւ այդ խողովակները պատրաստելու համար իրիզիոնից: Օրագիրն The Scientific American, որի խմբագրատանում այդ գրիչներն ՚ի գործ են դրվում արդէն մէկ տարուց աւելի, մեծ գովասանութեամբ խօսում է նոցա վերայ: Այսպիսի գրիչների յաւակութիւնն և առաւելութիւնն, հասարակ երկաթի գրիչների հետ համեմատելով, որք պահանջում են առանձին թանաքաման, բացաարել իհարկէ աւելորդ է:

ՍՈՒՐ ՈՉ ԵՐԿՐԱՅԻՆ ՄԵՏԱՂԻՑ:

Վմերիկայում, Մէքսիքայի քաղաքական թանգարանում դրուած է հետազօտութեան համար յոյժ հերաքբերական և զարմանալի մի իր: Այդ իրդ սուր է, երկաթից շինուած, որի ծագումը ոչ է երկրային, ըստ որում այդ մետաղը հանուած է շանթաքարից՝ որ ընկաւ Մէքսիքայում, Գուերանյօ նահանգում: Կոյն նահանգի քաղաքացիներից մին ընծայեց Միացեալ Նահանգների զօրապետ Օդին մի կտոր մետաղի՝ որին հանեց նա այդ շանթաքարից և որ կոչվում է երկաթեայ մետէօր: Օ.օ.րապեան Օդ տուաւ այդ երկաթը Սպրինգֆիլդեան զինարանին խնդրելով շինել նորա միջից սուր Մէքսիքեան զօրապետ Թրօվիլիօի համար, որ երեւելի հանդիսացած էր պատերազմում Հնդկաց հետ: Մեծ աշխատութիւն ՚ի գործ դրուեցաւ այդ երկաթը արտաշիկացնելու համար մինչև այն աստիճան՝ որ կարող լինի ծեծուել. բայց նորանից շինեցին՝ որպիսի և իցէ կերպիւ՝ մի սուր, որ այժմ ամենցունց ուշադրութիւնը գրաւում է: Սկզբի վերայ ոսկի տառերով գրուած է. «Շինուած է երկաթից, որ ընկաւ Մէքսիքեան երկրից»:



ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

ԿԱՐԳԱ ՈՒ ԿԻՍԱՆԱՍ

ԵՐԵՎԱՆԻ ԽՕՍԵՎՅԱՆԻ ԹԻՒՆ:

— Պարոն Համբարձում, դու, իմանում
 իմ, խելքը մարդ իս, շատ իս կարգացել ու
 շատ էլ կարգում իս ասան խնդրեմ՝ գրա-
 բառ լեզուն հարկաւոր է սովել՝ թէ մեր
 խօսած աշխարհաբար բաւական է յօղւած
 գրելու կամ գիրք թարգմանելու համար:

— Վրոսա իս ասում, Գեորգ Արտեմիչ,
 թէև շատ իմ կարգացել, շատ իմ խօսա-
 ցել, խոմ գիտիս ես Ակոյ վարժապետի ա-
 շակերան իմ, բայց իրաւ չիմ իմանում
 վունց քիզ բայտարեմ, հասկցնեմ: Գիտես,
 իժում ժամանակը փոխվել է Ակոյ ու Առա-
 քել վարժապետի ժամանակը չէ՛: վունց
 կնանեկանց շարերի մէջ նոր նոր մօղա է
 դուրս գալիս, էդպէս էլ ուզում ին լեզուի
 մէջ մօղա ձգել: Օրինակ՝ Փրանսեվար, ու-
 սելար բառեր գործածել Հայերէն բառերի
 տեղ, Հրովմայեցոց թուանշաններ գնել
 և այլանդակ ամկական ոճեր ու ձևեր գործածել, որ եթէ
 խորնացին անգամ գերեզմանից դուրս գայ չի հասկանալ:
 Մէկ խօսքով այժմեան մեր ջահիլ պարոններն, որոնք ուսում
 ին անում զազրանիցում (խօսքս Գրիգոր Արժրուհու վրայ
 չէ՛: նա մէկ ամսում հայերէն սորվելով Հայր Ղևոնդից, այ
 դօջալ, ուզեցիլ է դաս առլ Հայր Արտէն Բաղրատունու,
 վունց Զօջէրի երկրորդ հատորումն գրուած է), գրաբառ չիմա-
 նալով՝ սխալ են նորան պախարակել, անձուռնի անուանել և
 նոցա անյայտ բուն հայերէն բառերի տեղ՝ Փրանսերէն, ուսերէն
 բառեր գործածել, կարծելով որ էդպիսով իրանց լեզուն իբրև
 ամենքին, մինչև անգամ ուսմիլին, հասկանալի կուլի և գրա-
 բառից հազար անգամ գեղեցիկ ու կատարեալ կուգանայ:
 բայց սուտ, մի հաւատան, սոցա ամենքի նպատակն ծածկիլ է
 իրանց ազիտութիւնը. առանց գրաբառին լաւ ծանօթ լինելու



ԵՐԿՈՒ ԲԱՐԵԿԱՍ:

նչ մի ժամանակ կարելի չէ՛ աշխարհաբար
 լաւ իմանալ:

— Ապա ի՞նչ կուտես մեր նոր քննաբան
 պարուն Սարգսեանի մասին: Ինձ, մեր զրացի
 Պոպովը հաւատացնում է թէ նա Ռուս
 Բէլինսկուց էլ բարձր է, Նալբանդովից էլ
 սրամիտ...

— Նա էլ նրանց կարգիցն է, թէև զա-
 զրանիցում ուսում չէ՛ առել:

— Ասիր խնդրեմ՝ Հայերէն ո՞ւմ մօտ է
 դաս առել...

— Հայերէն, եթէ չեմ սխալվում, կար-
 ծեք երեմիա վարժապետի մօտ է սորվել
 երկու ամսուան մէջ:

— Ի՞նչ իս ասում. չէ, էդ անկարելի է.
 էդպիսի վարժապետի աշակերտը գրաբառի
 վրայ կարող չէ՛ ծիծաղել էդպէս վունց որ
 ծիծաղում է նա. ես կարող չիմ հաւատալ՝
 որ էդպիսի վարժապետի աշակերտն կարո-
 ղանայ գրաբառին անձուռնի ասել և հայ-
 կաբաններին ծաղրել...

— Ի՛, Գեորգ Արտեմիչ, ասում իս՝ թէ չիս կարող հա-
 ւատալ. բայց ես ասում իմ՝ հաւատաւ. իժում ամեն բան
 կարելի է: Եթէ ասեն՝ թէ միները կատուներին քշեցին՝ հա-
 ւատան:

— Հասկանում իմ. ուրեմն էդ էր պատճառը՝ որ Սարգսեան-
 յին էջմիածնում վարժապետ չընդունեցին... Եւ լաւ էլաւ,
 ս՝ գիտէ մեր երեխանցը գլխից կուհաներ՝ որ գրաբառ չսորվին...
 Բայց, մնաւ բարով, ուշացայ, գնում իմ Գրիգորեանցի դու-
 քանը, ուզում իմ «Զօջեր» գնել, ու Արժրուհու կեանքը
 կարդալ. ասում ին՝ թէ շատ հետաքրքրական է...

— Ուրեմն ես էլ գնամ Օրլայի Փօթօգրաֆիան, նրա պատ-
 կերը գնեմ, գուցէ ժամանակով հարկաւոր կըլնի:

Մո՞ծակ:

ԹՂԹԱԳԻՐ



ՊԱՏԱՍԻԱՆԻՔ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Տպագրուելու չէ՛ չափածոյ բանքն. Բարի մօր յիշատակ:—
 Վարիք Մշեցու փափազը:— Մաեքմական խորհուրդ:— Բրիտ-
 տանեանց թէ կուպաշա:— Ուղերձ:

Աբրահամը—Ին. Տանկրեա՝ յորդ Բիկոնսֆիլդի վէպը:— Գրօ-
 շակակիր՝ գործ Ալֆօնսայ Գօդէ:— Երեւակներ՝ գործ նոյն
 հեղինակի:

Տէխն. առ Պարոն Համբարձում. Գրիգոր Արժրուհու պատ-
 կերն կուպագրուի իր ժամանակին:

Երևան. առ Մեծ Ս. Ի. Չեր նամակն տեղ չը լինելոյն պատ-
 ճառաւ մնաց յաջորդ տետրիս:

Տէխն. առ Ա. Տ.—Յ. Չեր ուղարկած պատկերներն անյար-
 մար են «Փարոսի» համար, ուստի չեն տպագրուելու:

Տէխն. առ պ. Տիգրան Գուշնազարեան: Չեղ չէ՛ ուղարկվում
 «Փարոսը» այն պատճառով, որ դրափաճառ Զ. Գրիգորեանցն
 մինչև ցայսօր հասուցած չէ՛ մեզ ոչ Չեր հասցեն և ոչ Չեր
 բաժանորդութեան դրամը:

Ռոստով Գօն Էեֆի վերայ. առ Մեծ. Մարիամ Մ. Չորչո-
 բեանց: Պ. Սիմեօն Թիթրովը հասուցած չէ՛ մեզ ոչ Չեր հաս-
 ցեն և ոչ Չեր բաժանորդագրութեան դրամը:

Մոզձոգ. Մոզձոգскому Собранию: Второй выпускъ «Маяка» высланъ
 вторично.

Խնդրում է՛ գրավաճառ Պ. Չաքարիա Գրիգորեանցին վճա-
 րել մեզ իւր պարտքը և փութով հասուցանել մեր հանդիսին
 իւր մօտ բաժանորդ գրուողայ ցուցակը և նոցա բաժանորդու-
 թեան դրամը:

Սարգիս Սարգսեանցին. Մենք ձեզ պատասխանելու չենք և
 ոչ ձեր խրատն կատարելու: Եթէ «Փարոսի» լեզուն ձեզ հա-
 ւանելի չէ՛ այդ դեռ չէ՛ նշանակում՝ թէ նա վատ է կամ վիտ-
 սակար: Գրեցէք, լցրէք Մշակի էջերը որքան և կամիք մեզ
 համար ձեր խօսքը է՝ «ձայն բարբառոյ յանապատի»:

Մ Ր Ի Պ Ա Կ Ք:— Հանդիսիս առաջին երեսում նշանակուած ամիսներն «Ապրիլ-Մայիս» — ճիշդ չէ՛ պետոյ է լինի
 «Մայիս-Յունիս», որպէս տպուած է չապիի վերայ: 12—13 երեսներում տպուած պատկերի տակում անդգուշութեամբ ՚ի
 բաց են թողուած բառերս՝ ՚ի Տէր հանգուցեալ «— въ Божѣ почишаго».—

Հ Ր Ա Ւ Է Ր

Համաձայն առաջարկութեան և ցանկութեան Կարուց սրբազան առաջնորդ Գրիգորիս եպիսկոպոսի Ազուանեանց, մեր վերայ պարտականութիւն կայ զրուած վարկու Անույ կկեղեցեաց վերանորոգութեան հոգաբարձութեան պաշտօնը: Արպէս նորա հոգողութեամբ, նոյնպէս և մասնաւոր ժողովարարութեամբ և նուիրատուութիւններով, արդէն շինուած կայ Անույ միջում մայր կկեղեցւոյ մօտ մի բնակարան հինգ մասերից բաղկացած. մաքրուած է մինչև սալայատակի երեսը մայր կկեղեցւոյ մէջը, փոքր ինչ կարգի բերուելով, ժամասացութեան և պատարագի համար պատրաստուած է սուրբ Լուսաւորիչ կկեղեցին և մօտ ժամանակներումս Կարսի սրբազան առաջնորդի հաւանութեամբ նշանադրուած է արդէն Անիի կկեղեցեաց վանահօր փոխանորդ բարեշնորհ Արսէս վարդապետ Տիգրանեանցը, որ մշտապէս մի քանի անձանց հետ բնակելու է Անիի մէջ և այսպիսով հիմք է դրվում կանոնաւոր միաբանութեան: Բայց այս բոլորը սկիզբն է պաշտպանելու և վերանորոգելու այն պանծալի աւերակների, որ մեր աշխարհաշէն նախորդների մեծագործութեան նշխարներն են ներկայացնում և որոնք ամեն մի Հայի սիրտ թունդ են հանում իւրեանց մոգական ազդեցութեամբ, զարթեցնելով նոցա մէջ Հայ ազգի նախնի փառաց յիշատակները, յիշատակներ, որոնք միշտ սուրբ եղել են, են և լինելու են: Հոգաբարձութիւնս այսու յայտնում է իւր արագայ դործունէութեան նախագծի գլխաւոր կէտերը. —

1) Ե ինութիւն բնակարանի միաբանութեան համար կաթուղիկէ և Լուսաւորիչ կկեղեցեաց տարածութեան մէջ, այժմ ունեցած շինութիւնն ուխտաւորների և ճանապարհորդների համար թողնելով,

2) Աւերանորոգութիւն կաթուղիկէ մայր կկեղեցւոյ, 3) Ընդարձակել այցելուների համար նշանակուած շինութիւնը, որ կարելի լինի ցանկացողներին հարկաւոր եղած ժամանակ աւելի երկար մնալ, 4) Աւերակների գլխաւոր տեղերի մէջ կանոնաւոր ճանապարհների հարթել, 5) Գաշտից ջուրը բերելով շինութեանց մօտ ծառուղիներ և պարտէզիկներ անկել, 6) Չորերում այգիներ անկել, 7) Աշխատել մի կենդրոնական ուսումնարան հիմնել զրացի հայաբնակ գիւղերի համար, 8) Ամեն կերպով աշխատել աւերակները պահպանել, 9) Աշխատել կարեւոր գիւտերի մասին հայ ազգին և լուսաւորեալ հասարակութեան ծանօթացնել, նպաստելով, թէ ազգային հնագիտութեան և թէ պատմութեան, 10) Աշխատել հնագիտէ նորոգել կարելին, 11) Աշխատել հաստատ աղբիւրներ գտնել միաբանութեան և ուսումնարանի համար և այլն:

Մեծ են հոգաբարձութեան պարտականութիւնները, բայց տկար են նորա միջոցները: Ամեն մի նուէր՝ փող, կկեղեցեաց զարդ, սրբազան անօթներ և այլն սիրով կընդունուին հոգաբարձութեան կողմից, որի ձգտումը պէտք է լինի ամեն կերպով այնպիսի մի ազգային սրբութիւն պահպանելու և վերանորոգելով ու ծաղկեցնելով ազգին յանձնելու, որ այսուհետև իսկապէս լինելու է ազգային ուխտատեղի:

Նուէրները ուղարկուելու են հետեւեալ հասցէով *Авессолому Ивановичу Иоаннисянцу, Александрополь.* իսկ օտար երկրացիք այս հասցէով՝ *Alexandropol, à Abesolom Joannissianz.*

Հրատարակուեցաւ Ս. Ե. Ա. Հ. Ա. Օ. Ի. Օ. Ե. Ն. Ե. Ն. «ՀՐԱՍՏԱՆԿԱՆՈՍ ԶԵՅՆ» վերնագրով՝ 8 ծալ, 351 երեսից բաղկացած և Ստեփաննոս Նազարեանցի պատկերով զարդարուած գեղեցիկ և արժանի յամենայն կողմանէ ուշադրութեան երկասիրութիւնը: Ստանալ կարելի է հեղինակի մօտ Մոսկուայում: Գինն է 2 ռուբլի: Օտարաքաղաքացիք իւրեանց նամակների հասցէն գրելու են այսպէս. «Москва, Армян. пер., во здании Лазарев. Института восточныхъ языковъ, Сумбату Семеновичу Шахъ-Азизу».

ՉՈՐՍ ՄԱՆՐԱՎԷՊ Թարգմանութիւն Ն. Տէր-Աւետիքեան, հրատարակութիւն Ս. Հախումեանց: Ա. Գիւրք Ըուշե, 1881. գինն է 20 կ. Գնել ցանկացողներն դիմում են Ըուշե հրատարակչին (*Шуша, Симеону Ахумянцъ.*)

«ՓԱՐՈՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ» պատկերազարդ հանդիսի 1879 և 1880 թուականի տետրերն կարելի է ստանալ վճարելով իւրաքանչիւր տետրի համար 4½ Բի ռուբլի: 1879 թուականի տետրից մնացած կայ 5 օրինակ. 1880 թուականի առաջին տետրից՝ 100, իսկ երկրորդից՝ 102 օրինակ:

ՀՍԿԱՅԱԿԱՆ ՉԵՌ-ՔԵՐ, Անդղիական վէպ, պատկերազարդ, տղայոց ընթերցանութեան համար. Գինն է 10 կ. (սկաւախի):
ԵՂԲԱՅՐ ԵՒ ՔՈՅՐ, Գերմանական վէպ, պատկերազարդ, փոքր տղայոց ընթերցանութեան համար. Գինն է 30 կոպ.
ԱՐՔԱՅԱԿՈՒՍՏԻ-ՎԱՐԴԵՆԻ, Գերմանական վէպ, պատկերազարդ, փոքր տղայոց ընթերցանութեան համար. Գինն է 35 կ.
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ կաթողիկոսաց Էջմիածնի ՚ի Սիմէօնէ մինչև ցՅովհաննէս Ը. ամբ Տեառն 1763—1831: Գրեալ ՚ի Մտերայ Մաղիսարոսէ Մտերեանց Զմիւռնացւոյ: Մոսկուա, 1876. 306 երես. Գինն է 2 ռ.
Վաճառվում են «Փարոսի» խմբագրատանում:

„МАЯКЪ АРМЕНИИ“ ИЛЛЮСТРИРОВАННЫЙ ЖУРНАЛЪ,

НА АРМЯНСКОМЪ ЯЗЫКЪ,

ИЗДАВАЕМЫЙ ВЪ МОСКВѢ

СОФІЕЮ МСЕРІАНЦЪ.

№ 3.

ГОДЪ ТРЕТІЙ.

1881 ГОДА.

ԲՈՂԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

	Էջ.
Ա. Սարգիս Պէյ Պալեան	1
Բ. Հայոց Դիւցազնը 1877 [Թուականին]	2
Գ. Միրզայեան Մանուկ Պէյ. Գ. Թ.	—
Դ. Մինեան	6
Ե. Կրեքեան ընթացք ժամանակի	—
Չ. Շիրակի մի քանի Հնութիւնները	7
Կ. Մեղք հաղար	14
Բ. Մարտի մէկի անցքը	—
Թ. ՀԱՅԿԱԶՆԵԱՆ ՏԱՐԵԳԻՐ	15
Ժ. ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՈՒԵՍ	23
ԺԱ. ԱՅԼ ԵՒ ԱՅԼԻ	24
ԺԲ. ՕԱՆԱԶԱՆ ԳԻՏԵԼԻԲ (Հասկի 2 և 3 երեսներով):	

ՅԱՆԿ ԳԵՏԿԵՐԱՅ

- Ա. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԿԱԶՈՒՆԻԲ:— Ա. Սարգիս Պէյ Պալեան (էջ 1):— Բ. Հայոց Դիւցազնը 1877 [Թուականի (էջ 3)]:— Գ. Տըթօր Ռաֆաէլեան (էջ 8):—
- Բ. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱԳԱՒՈՐԷ:— Ա. Ի Տէր հանդուցեալ կայսրն Աղէքսանդր Երկրորդ (էջ 9):—
- Գ. ՏԵՍԱՐԱՆԻ ԱՇԽԱՐՀԻ:— Ա. Հրապարակն Չմեռնային Պալատի առաջն. (էջ 16):— Բ. Պեարոս-Պօղոսեան Տաճարն (էջ 21):— Գ. Մարտի մէկի եղեւնագործութեան սեղն (էջ 5):—
- Դ. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԳԻՊՈՒԱԾԻ Ա. Փոխադրութիւն Ճարմնոյ Ի Տէր հանդուցեալ կայսրն Աղէքսանդրի Երկրորդի (էջ 12-13):— Գ. Ռուսքէն յնասուած կայսերական կառքն (էջ 17):—

Փարոս Հայաստանի հանգէսը ստանալ ցանկացողքն իրենց նամակաց հասցէն գրելու են այսպէս. Въ Москву, Меньшикова башия, дома Миловацова, Ея Превосходительству Издательному „Маяка Арменіи“ Софьи Мсерианцъ. Տաճկաստանի Հայք կարող են բաժանորդ գրուել դիմելով Ի կ. Պօլիս առ Պ. Միրզա Մսերեան, Ամսա ալթը Բարազ խանի ձօս, Թիւ 28, կամ Ի Չմեռնիա՝ առ Պ. Գրիգոր Մսերեան, Ի Սիլիւի խան, վերի յարկ, Թիւ 17, և կամ ուղղակի դիմել առ հրատարակիչն, իրենց նամակաց հասցէն գրելով այսպէս. à Son Excellence M-me Sophie Missérianetz, à Moscou, Menchikowa bachnia, maison Milovanoff.